


## ԳՈՆԿՐԵՍԱԿԱՆ ԱՏԱՍ ՇԻՖ ԿՈՉ Կ'ԸՆԵ ԻՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ՝ ՎԱԲԵՐԱՑՆԵԼՈՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵԻԸ



Գոնկրեսական Ատամ Շիֆ

Կլենտոնյալ-Փաստինա-Պըր-պէնք հայաշատ քաղաքները ներկայացնող գոնկրեսական Ատամ Շիֆ շրջանառութեան մէջ դրած է ներկայացուցիչներու Տան անդամ իր գործընկերներուն ուղղուած նամակ մը՝ կոչ ընելով ստորագրելու եւ աջակցութիւն յայտնելու Հայոց

Շաբ.ը էջ 4

## ԱՐԿԱԴԻ ՂՈՒՎԱՍԵԱՆԻ ԱՅՑԸ ՀՆՉԱԿԵԱՆ ԿԵԴՐՈՆ

Անցեալ Երեքշաբթի, 15 Յունիս, 2010, Ս. Դ. Հնչակեան Կեդրոնն այցելեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախկին նախագահ Արկադի Ղուկասեան: Իրեն կ'ընկերակցէր Արևմտեան Ամերիկայի Հայաստան Համահայկական Հիմնադրամի տեղական վարչութեան ատենապետ՝ իրաւաբան Արա Ակիբեան: Սոյն հանդիպման ներկայ էին Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արևմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի անդամներ եւ յարակից կառույցներու ներկայացուցիչներ:

Շրջանի Վարիչ Մարմնի ատենապետ՝ Վազգէն Խոտանեան իր բարի գալուստի խօսքին մէջ ողջունեց յարգարժան հիւրերուն ներկայութիւնը: Առանձնապէս յաջողութիւն մարտնչ Արկադի Ղուկասեանին, որ վերջերս ընտրուած է Հայաստան Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի փոխ-նախագահ: Այնուհետեւ տեղի ունեցաւ մտերմիկ գրոյց, որու ընթացքին խօսակցութեան նիւթ դարձան Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման, Հայաստանի Հիմնադրամի գործունէութեան, Հայաստանի մէջ տիրող այժմու կացութեան եւ սփռուած հայութիւնը յուզող հարցեր: Գալով Ղարաբաղի կարգավիճակի լուծման՝ Արկադի Ղուկասեանի կարծիքով՝ անմիջական լուծում առ այժմ հնարաւոր չէ եւ այս հարցին նկատմամբ ցոյց տուաւ վերապահ լաւատեսութիւն:

## ՄԻՆԱԿԻ ԽՈՒՄԲԸ ԽՍՏԻ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ՌԺԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԵՆ ՉՈՐՍ ԶՈՅ՝ ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՅԱՐՉԱԿՈՒՄԻՆ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ

Լեռնային Ղարաբաղի եւ Ատրպէյճանի զինուած ուժերու շփման գիծին վրայ, Յունիս 18- 19-ի լուսցող գիշերը տեղի ունեցած միջադէպի կապակցութեամբ ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի համանախագահները հանդէս եկան յայտարարութեամբ մը՝ խստիւ դատապարտելով ուժի կիրառումը եւ ցաւ յայտնելով մարդկային անիմաստ կորուստներուն համար:

«Նման միջադէպը 1994 թուականին կնքուած հրադադարի համաձայնագիրի անընդունելի խախտում է եւ կը հակասէ ուժի կամ ուժի կիրառման սպառնալիքի գործադրումէն զերծ մնալու կապակցութեամբ կողմերու ստանձնած յանձնառութիւնը» - ըսուած է ԵԱՀԿ-ի պաշտօնական կայքէջին վրայ գետնորուած յայտարարութեան մէջ: Մինսկի խումբի համանախագահներ՝ Ռոպերթ Պրատկէ, Պեռնար Ֆասիէ եւ Իկոր Փոփով կողմերու ն կոչ կ'ընեն զսպուածութիւն ցուցաբերելու եւ «իրենց բնակչութիւնը նախապատրաստել խաղաղութեան, այլ ոչ թէ պատերազմի»: Միջնորդները անգամ մը եւս կ'ընդգծեն, որ խաղաղ բնակչութիւններու միջոցով հակամարտութեան կարգաւորման այլընտրանք չկայ եւ պատերազմը չի կրնար դիտուուիլ որպէս միջոց: Յունիս 18-ի ուշ երեկոյեան



Ղարաբաղի Պաշտպանութեան բանակի զինուորը կը հսկէ հայկական դիրքերէն մին

Ղարաբաղի Պաշտպանութեան բանակի դիրքերը հսկողներու եւ ատրպէյճանական հետախուզական զինուած խմբաւորումին միջեւ Մարտակերտի շրջանէն ներս տեղի ունեցած մարտի հետեւանքով հայկական կողմէն գոհուած է 4, վիրաւորուած՝ եւս 4 բանակի ծառայող: Ատրպէյճանական կողմը նահանջած է՝ ձգելով մէկ դիակ եւ զինամթերք: Յունիս 18-ի միջադէպէն ի

վեր ղարաբաղ-ատրպէյճանական շփման գիծին վրայ տեղի կ'ունենան զինադադարի գրեթէ ամենօրեայ խախտումներ: Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեան մեկնաբանելով Յունիս 18-ին տեղի ունեցած բախումը յայտարարեց, որ ղարաբաղեան հակամարտութեան միջնորդները՝ ԵԱՀԿ-ի Մինսկի խումբը

Շաբ.ը էջ 4

## ՄԱՍՆԱԿՑԵԼՈՎ ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՌԻՈՒԿՈՒՄՅԻ ԱՌԱՋԻՆ ՏԻԿԻՆԸ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ Է «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ ՆԻԹ ՉԻ ԿՐՆԱՐ ԸԼԼԱԼ»

Ուրուկուայի առաջին Տիկին, ծերակուտական Լուսիա Թոփոլանսքի ելոյթ ունեցած է ՄԴՀԿ-ի Քսան Կախաղաններու 95-րդ տարելիցին նուիրուած հանդիսութեան ու յայտարարած, որ Ուրուկուայի կառավարութիւնը պիտի շարունակէ պաշտպանել Հայոց Յեղասպանութեան ճանաչումը:

Հանդիսութիւնը տեղի ունեցած է Յունիսի 15ին, Մոնթեվիտոյի «Հնչակեան Ակումբի» սրահէն ներս: Ներկայ գտնուած են ՀՀ պատուակալ հիւպատոս Պր. Ռոբէն Աբրահամեան, Հայ Առաքելական Եկեղեցւոյ առաջնորդ Տ. Յակոբ Արք. Գելլենճեան, Կաթողիկէ Վարդապետ Անթոնիո Գեչեճեան, Պատուելի Օպետ Պոյաճեան, տարբեր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ ներկաներ: Բացման խօսքով հանդէս եկած է ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան անդամ ընկ. Տիէկո Գարամանուկեան, որ յայտարարած է թէ, Քսաններուն նպատակն էր կանխել հայոց ցեղասպանութիւնը եւ ատոր համար է որ անոնց մեծութիւնը սահման չունի: Ուրուկուայի եւ Հայաստանի քայլերգներու երգեցողութենէն ետք



Ուրուկուայի առաջին Տիկին, ծերակուտական Լուսիա Թոփոլանսքի

հանդիսավար Ընկերուհի Ժանէթ Գուրուսեան հրաւիրած է Յակոբ Սրբազանը՝ իր պատգամը տալու համար: Առաջնորդը նշած է որ Հնչակեան քսանները կը պատկանին ամբողջ հայութեան եւ անոնց ղեկավար Փարամազը, ինչպէս Զօրավար Անդրանիկը եւ Կոմիտաս Վարդապետը՝ ունեցան հեռատեսութիւնը չհաւատարութեամբ Փաշային եւ անոր գործակիցներուն: Ան նշեց որ Պոլսոյ Զաւէն Պատրիարքը իր յուշերուն մէջ գրած է

որ ինքը ժամանակին դատապարտած էր Հնչակեանները, սակայն յետոյ, խոստովանած է որ անոնք ճիշդ էին եւ իրաւունք ունէին չհամագործակցելու Երիտթուրքերու հետ: Հնչակեան Երիտասարդներու անունով ելոյթ ունեցած է Ընկ. Ռոպերթօ Կենճեան, բարձր գնահատելով Քսաններու քաղաքական տեսիլքը ու միաժամանակ ցաւ յայտնելով որ այս կարեւոր իրադարձութիւնը Հայաստանի մէջ չի նշուիր ըստ արժանւոյն: Ապա ելոյթ ունեցած է փաստաբան Ալպերթօ Քէօշքէրեան՝ անդրադառնալով Թուրքիոյ ժխտողական քաղաքականութեան եւ Ուրուկուայի օրինակելի դիրքորոշման: Ապա տեղի ունեցած է գեղարուեստական ներկայացում մը ակումբի պատանիներուն կողմէ, որոնք արժանացած են ներկաներու խանդավառ ծափահարութիւններուն: Վերջաւորութեան ելոյթ ունեցած է Ուրուկուայի առաջին տիկին, ծերակուտական Լուսիա

Շաբ.ը էջ 4





# ԼՈՒՐԵՐ

## ՈՒՐՈՒԿՈՒԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՏԻԿԻՆԸ

Շաբաթնակալուած էջ 1-էն

Թոփոլանաքի:

Առաջին հերթին ան փոխանցած է իր ամուսնոյն՝ Ուրուկուայի Նախագահ Խոսէ Մուխիքայի գորակցութիւնը: Ան յայտնած է որ ինք ըլլալով Երկրի առաջին ծերակուտականը պիտի շարունա-

նուիրուած հանդիսութեան անմիջապէս յետոյ ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան անդամ Տիէկո Գարամանուկեան եւ ՄԴՀԿ-ի Ուրուկուայի Վարչի Մարմնի Ատենապետ Տոքթ. Մարալ Բէօշկէրեան առանձին հանդիպում ունեցած են Ուրուկուայի առաջին տիկին, ծերակուտական Լուսիա Թոփոլանաքիի



Ընկերներ՝ Տիէկո Գարամանուկեան (ձախիմ) եւ Մարալ Բէօշկէրեան Ուրուկուայի առաջին տիկնոջ հետ իրենց ունեցած հանդիպման ընթացքին

կէ պաշտպանել հայ ազգի արդար իրաւունքները: Տիկին Լուսիա Թոփոլանաքի գուգահեռներ կատարած է Քսաններուն անցած ուղիին եւ իր կեանքին միջեւ, երբ գինուորական բռնապետութեան տարիներու բանտարկուած է ու բանտին մէջ ունեցած է հայ ընկերուհի մը, Անահիտ Ահարոնեան, որու հետ միասին հայկական տառերով արուեստի գործեր պատրաստած են ազատութեան մէջ գտնուող իրենց ընտանիքի անդամներուն եւ բարեկամներուն հետ հաղորդակցուելու նպատակով:  
Քսաններու 95 ամեակին

հետ Հնչակեան Կեդրոնին մէջ: Հանդիպման ժամանակ Կուսակցութեան ներկայացուցիչները փոխանցուած են ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան երախտագիտութիւնը Ուրուկուայի Նախագահի հայանպատ դիրքորոշումներուն համար: Քննարկուած է Հարաւային Ամերիկայի մէջ իրականացուող թրքական նոր քաղաքականութիւնը, որու նպատակն է կասկածի տակ առնել Հայկական Յեղասպանութիւնը: Տիկին Թոփոլանաքի ըսած է որ, Ուրուկուայի համար Յեղասպանութիւնը սակարկութեան նիւթ չի կրնար ըլլալ:

## ԳՈՆԿՐԵՍԱԿԱՆ ԱՏԱՍ ՇԻՖ ԿՈՉ Կ'ԸՆԷ

Շաբաթնակալուած էջ 1-էն

Յեղասպանութիւնը ճանչցող թիւ 252 բանաձեւին:  
«Միացեալ Նահանգները շատ երկար ժամանակ տուրք տուած է թուրքիոյ սպառնալիքներուն եւ ձախողեցուցած է Յեղասպանութեան գոհերու ճանաչման ջանքերը», - գրած է Ատամ Շիֆ, որ նաեւ անդամ է Գոնկրէսի հայկական հարցերով յանձնախումբին: «Մնացուած կերպով գոհերը չի շատակելու եւ յարգանքի տուրք մատուցելու մեր բարոյական պարտքը տեղի տուած է երկկողմ յարաբերութիւնները պահպանելու նկատառումներուն: Տարիներ շարունակ Յեղասպանութեան ճանաչման աջակիցները լսած են նոյն պնդումները, թէ այժմ ժամանակը չէ»:  
«Ճիշդ հակառակը՝ այժմ, երբ թուրքիան կ'աջակցի իրանին, ինչո՞ւ պաշտպանել զանոնք՝ Յե-

ղասպանութիւնը ժխտելու հարցով, - գրած է գոնկրէսականը, չի շեղուել վերջին շրջանին Անգարայի առած շարք մը նախաձեռնութիւնները եւս, որոնք կը հակասեն Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութեան:  
«Արդեօ՞ք մենք պէտք է շարունակենք վիրաւորել գոհերու չի շատակը՝ կեղծ բարեկամին հանգստացնելու համար», - ըսած է Շիֆ՝ աւելցնելով, - «Այժմ եկած է ժամանակը վերահաստատելու մեր բարոյական պարտքը՝ որպէս Յեղասպանութեան դէմ պայքարի առաջամարտիկ, եւ յարգանքի տուրք մատուցելու մէկուկէս միլիոն անմեղ մարդոց, կանանց ու երեխաներու չի շատակին»:  
Այսօրուայ դրութեամբ, Ներկայացուցիչներու Տան Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող փաստաթուղթին կ'աջակցին 143 գոնկրէսականներ:

## ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿԵԹԵՐԱՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԻ ՅՈՅՑ ՆԱԽԱԳԱՐԻ ՆՍՏԱԿԱՅՐԻ ԱՌՋԵՒ

Ղարաբաղեան պատերազմի վերջերանների միութիւնը Յունիսի 21-ին Հայաստանի նախագահի նստավայրի առջեւ բողոքի ցոյց է անցկացրել՝ հանդիպում պահանջելով Սերժ Սարգսեանի հետ, որ այս օրերին պաշտօնական այցով գտնուում է Գերմանիայում:  
Ղարաբաղեան պատերազմի վերջերանները, մասնաւորապէս, պահանջում են ոտքի կանգնել եւ ոչ մի թիզ հող չչանձնել Ադրբեջանին: «Բոլոր տղամարդիկ պէտք է գէնք ունենան, որպէսզի անհրաժեշտութեան դէպքում կէս ժամից վերցնենք Բաքուն», - յայտարարեց ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի առաջին գորահրամանատար Արկաղի Կարապետեանը (Ագոն):  
Մեկնաբանելով Յունիսի 18-ի ադրբեջանական դիվերսիան,

որի հետեւանքով չորս հայ զինծառայող է զոհուել, Կարապետեանը նկատեց, որ հայերը շատ ինքնավստահ են: «Ոչ ոք ոչ մի հարց չի կարող լուծել, եթէ ազգը քնած է: Եթէ մենք գո՞ն լինենք, ոչ ոք ոչ ինչ չի կարող անել մեզ: Եթէ մենք ուժեղ լինենք, պատերազմ չի լինի: Երբ մենք թուլանում ենք, թշնամուն թուում է, որ ինքը կարող է յարձակուել եւ յաղթել», - կարծում է Կարապետեանը: Նրա կարծիքով, իրավիճակից ելքը Արցախի եւ Հայաստանի միացումն է: Վերջերանները նաեւ նշեցին, որ եթէ Երեւան վերադառնալուց յետոյ Սերժ Սարգսեանը չընդունի իրենց, ապա այդ դէպքում իրենք որոշակի քայլերի կը դիմեն, որոնց մասին կը յայտարարեն յաւելեալ:

## ՀԱԿ-Ը ՌԱԶՄԱԿԱՆ ԿՏԱՆԳԻ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՒԱԿԱՆՕՐԵՆ ԿԱՆԳՆԵԼՈՒ Է ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Հայ Ազգային Գոնկրէսը յայտարարութիւն է տարածել կապուած Յունիսի 18-ի լոյս 19-ի գիշերը Մարտակերտի Չայլու գիւղի մօտակայքում ադրբեջանական դիվերսիոն խմբաւորման կողմից ԼՂՀ տարածք ներխուժելու փորձի հետ: Յայտարարութեան մէջ մասնաւորապէս ասուում է.  
«Յունիսի լոյս 19-ի գիշերը ադրբեջանական դիվերսիոն խումբը Մարտակերտի ուղղութեամբ մտել է զարաբաղեան պաշտպանական դիրքեր, ինչի պատեւանքով, ըստ պաշտօնական հաղորդագրութեան, զոհուել է չորս զինծառայող, եւս չորսը՝ վիրաւորուել: Յարձակողները տուել են մէկ զոհ: Իսկ Յունիսի 20-ին, դարձեալ ըստ պաշտօնական հաղորդագրութեան, հրազդարի ռեժիմը ողջ սահմա-

նի երկայնքով խախտուել է 284 անգամ:  
Հայ Ազգային Կոնգրէսը դատապարտում է Ադրբեջանի կողմից հրազդարի ռեժիմի խախտման ցինիկ փաստը եւ ցաւակցում զոհերի հարազատներին: Մի կողմ թողնելով վարչախմբի յանցաւոր քաղաքականութեան հետեւանքով հրազդարի՝ աւելի ու աւելի փխրուն դառնալու պատճառները եւ վերահաստատելով Լեւոնային Ղարաբաղի խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու իր սկզբունքային դիրքորոշումը, Հայ Ազգային Կոնգրէսը միաժամանակ յայտարարում է, որ ռազմական վտանգի դէպքում վճռականօրէն կանգնելու է Լեւոնային Ղարաբաղի անվտանգութեան համար պայքարի առաջին դիրքերում»:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԵՆ ԶՈՐՍ ԶՈՐ

Շաբաթնակալուած էջ 1-էն

բի համանախագահները, «մտածելու բան ունին»:  
«Ես ցաւակցութիւն եմ յայտնում մեր չորս զոհուած գինուորների ընտանիքներին, հարազատներին», - լրագրողներուն ըսաւ Սարգսեան, որ աշխատանքային այցով կը գտնուէր Սան Փիթըրսպոլի եւ միջադէպէն օր մը առաջ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի նախաձեռնութեամբ եւ մասնակցութեամբ մասնակցած էր եռակողմ հանդիպումի՝ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ:  
Ատրպէյճանական կողմի յարձակումը որակելով «սադրանք»՝ Հայաստանի նախագահը յայտարարեց. - «Յատկապէս այս սմարդի գործողութիւններն անընդունելի են, որովհետեւ դրանք տեղի ունեցան Ռուսաստանի նախագահի նախաձեռնութեամբ անցկացուած եռակողմ հանդիպումից ժամեր անց: Սա նշանակում է, որ միջնորդները պէտք է մտորեն, քանի որ սադրանքները, մնալով անպատիժ, չեն ասում անպատասխան, հանգեցնում են նման եւ դեռ աւելի վատ հետեւանքների: Դա նաեւ անյարգալից վերաբերմունք է՝ ուղղուած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին»:  
Հայաստանի արտաքին գոր-

ծոց նախարար էդուարդ Նալբանդեան եւս «սադրանք» որակեց Յունիսի 18-ի գիշերը Լեւոնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանէն ներս ատրպէյճանական կողմի կատարած յարձակումը:  
«Բարձր մակարդակով իւրաքանչիւր հանդիպումից առաջ, Բաքուն փորձում էր սադրիչ յայտարարութիւններով, պատերազմի սպառնալիքներով միջոցով տապալել բանակցութիւնները», - ըսաւ Նալբանդեան:  
«Ակնյայտ է, որ դա նախապէս մտածուած եւ ծրագրուած գործողութիւն է: Դա եւս մէկ անգամ ցոյց է տալիս Բաքուի իրական դէմքը, որն ամէն ինչ անում է բանակցային գործընթացը ձախողելու համար», - յայտարարեց Հայաստանի արտաքին գործոց նախարարը:  
Միւս կողմէ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարեց, որ Ղարաբաղեան հակամարտութիւնը սառեցուած չէ, ինչպէս կ'ուզէ մտածել հայկական կողմը:  
«Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան գոտիէն ներս որեւէ բարեւոյց ցոյց կու տայ, որ Ատրպէյճան երբեք չի հաշտուել իր տարածքներու գրաւման հետ», - ըսած է Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութեան մամուլի խօսնակ էլիսան Պոլուխով:

**Չեր Ծանուցումները Վստահեցէք**  
**«Մասիս» Շաբաթաթերթին**  
**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**  
**massis2@earthlink.net**

### ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ՆՈՐ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ ԻՐԱՆԻ ԴԵՄ ՌՈՒՄԻԱ ԿԸ ՄԵՐԺԷ ՆՈՐ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Միացեալ Նահանգներու Գոնկրէսը կ'ուսումնասիրէ իրանի հետ տնտեսական գործառք կատարող դրամատուներուն դէմ միակողմանի պատժամիջոցներ սահմանող օրինագիծ մը: Օրէնքը՝ ամերիկեան հողերու վրայ ուժականութիւն ստանալու համար պայման է, որ վայելէ Գոնկրէսին եւ Մերակոյտին համատեղ հաւանութիւնը:

Ռուսիա պաշտօնապէս մերժեց իրանի դէմ Միացեալ Նահանգներու եւ Եւրոպական Միութեան կողմէ հաստատուած նոր պատժամիջոցները: Արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով յայտարարեց, թէ նախքան ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդին մէջ իրանի դէմ քուէարկուելիք պատժամիջոցներու բանաձեւին որդեգրումը, Մոսկուա յատկօրէն յայտարարած էր, թէ կը մերժէ միակողմանի պատժամիջոցները: Լաւրով «ծայր աստիճան յուսախաբական» գնահատական տուաւ Ուաշինկթընի եւ Եւրոպական Միութեան դիմած քայլերուն, աւելցնելով, որ Մոսկուայի համար «անընդունելի» պիտի ըլլայ անոնց գործադրութիւնը:

Լաւրով միաժամանակ յայտնեց, թէ Արեւմուտքը իր միակողմանի քայլերուն պատճառով կրնայ կորսնցնել Ռուսիոյ աջակցութիւնը:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարը յայտնեց, թէ Միացեալ Նահանգներ ինքզինք շատ աւելի բարձր կը դասէ քան ՄԱԿ-ը: Ան նաեւ ըսաւ, որ Մոսկուա պիտի շարունակէ ուժանիւթի կեղրոններ կառուցել իրանի մէջ:

### 100,000 ԻՐԱՔՑԻՆԵՐ ԱՐՏԱՍԱՅՄԱՆ ԿԸ ՄԵԿՆԻՆ

Դամասկոսէն ստացուած լուրերու համաձայն ՄԱԿ-ի գաղթականական հարցերու պատասխանատու Անթօնիօ Կիթէրէսի հաղորդած է թէ 2007 թուականէն ի վեր Սուրիա հաստատուած իրաքցիներէն շուրջ 100,000 հոգի երրորդ երկիր մը գաղթած են:

Նշենք նաեւ որ ներկայիս 1 միլիոն 800 հազար իրաքցիներ ապաստան գտած են Սուրիոյ, Լիբանանի, Յորդանանի, Եգիպտոսի եւ Թուրքիոյ մէջ: ՄԱԿ-ի գաղթականներու գրասենեակի հաղորդագրութենէն կ'իմացուի թէ վերջիշեաներու 76 առ հարիւրի դիմումն ընդունուած է Միացեալ Նահանգներ հաստատուելու համար:

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԻՈՅ

Չորս տարիէ ի վեր երաշտ կը տիրէ Սուրիոյ Հիւսիս Արեւելեան շրջաններուն մէջ, ուր կը բնակին մօտ 200,000 հոգի: 2 միլիոն Եուրոյի (2.5 միլ. տոլար) դրամական օժանդակութեան շնորհիւ Միջազգային Մոնետրի Ծրագիրը 2,900 թոն անդամթերքի առաքում կատարած է: Նպաստի բաշխումը կատարուած է առաւելաբար Հասաքէի, Տէր Զօրի եւ Ռաքբայի շրջանները: Տակաւին 110,000 հոգի գրկուած են օգնութենէ:

### ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՅ ԱՍԱՏ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ ԼԻԲԱՆԱՆ

Նախագահական պալատին մօտիկ աղբիւրներ հաւաստեցին, թէ Սուրիոյ նախագահ Պաշչար Ասատ ոչ շատ հեռու ժամանակամիջոցի մը ընթացքին պաշտօնական այցելութիւն մը պիտի տայ Լիբանան: Նախագահական պալատի աղբիւրներուն նախատեսութեամբ, եթէ երկրի եւ շրջանի քաղաքական պայմանները թոյլատրեն սոյն պաշտօնական այցելութիւնը կրնայ տեղի ունենալ յառաջիկայ մէկ ամսուան ընթացքին:

### ԼԻԲԱՆԱՆ ԿԸ ԲՈՂՈՔԷ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԽԱՆՏՈՒՄՆԵՐՈՒՆ ԴԵՄ

Յատուկ առաքելութեամբ Նիւ Եորք գտնուող լիբանանեան պատուիրակութիւնը՝ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Պան Քի Մունին փոխանցեց խորախնայ ամէնօրեայ խախտումներուն վերաբերեալ Լիբանանի պաշտօնական բողոքը: Բողոքագիրին մէջ յիշատակուած է, թէ լիբանանեան կառավարութիւնը նախանձախնդիր կը մնայ թիւ 1701 բանաձեւին գործադրութեան:

Բողոքագիրը միաժամանակ ՄԱԿ-էն կը պահանջէ յատկացնել Լիբանանի ծովային սահմանները, ընդգծելով, որ Լիբանան կը չարգէ ծովային երթեւեկութեան միջազգային կանոնագրութեան յօդուածները եւ նախանձախնդիր կը մնայ անոր գործադրութեան:

### «ՂԸՉՊԱԼԼԱ ՊԱՏՐԱՍՏ Է ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋԻՆ ԼԻԲԱՆԱՆՑԻՆ ՉՈՐՇԷԼ ԻՐ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ»

Միացեալ Նահանգներու Մերակոյտին առջեւ ունեցած իր ելոյթին ընթացքին, պետական քարտուղարութեան միջինարեւելեան հարցերու օգնական ձեֆրի Ֆելթման անդրադարձաւ Միջին Արեւելքի մէջ Հրզպալլայի ներկայացուցած սպառնալիքին: Ֆելթման նշեց, թէ Հրզպալլա պատրաստ է մինչեւ վերջին լիբանանցիին զոհել իր քաղաքական եւ ռազմական ծրագիրները իրականացնելու նպատակով: Ֆելթման այս ենթաբաժինն մէջ դրաւ լիբանանեան-ամերիկեան ապահովական համաձայնութեան դէմ Հրզպալլայի ծաւալած արշաւը: Իր արտասանած խօսքի աւարտին, Ֆելթման ընդգծեց, թէ Միացեալ Նահանգներ պարտաւոր են զգուշութեամբ հետեւելու Հրզպալլայի կողմէ Լիբանանին, իսրայէլին եւ Ուաշինկթընին ուղղուած սպառնալիքներուն:



## Հ.Բ.Ը.Մ. Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարան

### AGBU Vatche and Tamar Manoukian High School

**Նոր Աշակերտներու Արձանագրութիւն, 9րդ-12րդ Դասարաններ**  
**New Student Enrollment, Grades: 9-12**

- ✓ College Preparatory Academic Program
- ✓ Honors or Advance Placement (AP) Level Instruction in all subject areas
- ✓ Small Class Sizes and Individual Attention
- ✓ Visual Performing Arts Program in Dance, Drama, Theater, Music and Choir

- ✓ Comprehensive Armenian Curriculum
- ✓ Technology and Computer Program
- ✓ College Counseling and Admissions Guidance
- ✓ Co-curricular and Extra-Curricular Activities including Competitive Sports
- ✓ Safe and Secure Closed Campus

**Կրթաթոշակներ տրամադրելի են այն աշակերտներուն, որոնք ուսումնական բացառիկ յաջողութիւն ցուցաբերած են, ինչպէս նաեւ գերազանց ընդունակութիւն ունին հետեւեալ մարզերէն ներս.-**

**Հայագիտութիւն - «Technology» - Երաժշտութիւն - Թատրոն - Պարարուեստ**

**Չեր Զաւակներուն Համար Կատարեցէք Լաւագոյն Ընտրութիւնը**

**Ուսում, Կրթութիւն, Յաջողութիւն**

Call: (626) 794-0363  
 We are located at 2495 E. Mountain St, Pasadena, CA 91104

### ՀԱՐԿԵՐԸ ԵՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

#### ՎԱՐԿԱՆ ԶԱԼՈՅԱՆ

Հայաստանում անարդարութիւնը, սոցիալական բեւեռացումը, կաշառակերութիւնը, օրէնքի անտեսումն իշխանական վերնախաւի մօտ այնպիսի չափերի է հասել, որ վաղուց արդէն ժողովուրդը պէտք է ապստամբած լինէր: Չեն ապստամբում, որովհետեւ առաջժամ այլ ելքեր ունեն: Առաջին. դեռ կարող են արտագաղթել, ներգաղթի Ռուսական օրէնքներն այդքան կոշտ չեն: Երկրորդ, կարող են զբաղուել հարբեցողութեամբ: Երրորդ, եթէ աշխատաւորը տղամարդ է, կարող է գալ տուն եւ ծեծել կնոջն ու երեխաներին: Եթէ էլ ապստամբել, ուրեմն դեռ այս ելքերը նրան բաւարարում են: Պետական քարոզչութիւնը եւս համակիր է այս ելքերին:

Առաջինների համար կայ սփիւռքի նախարարութիւն եւ «Օտար, ամալի ճամբէքի վրայ» հաղորդում. յանկարծ վատ չզգան, որ արտագաղթել են: Երրորդի համար կան նահապետական բարոյականութիւնը փառաբանող թոքշոուներ. յանկարծ վատ չզգան, որ ծեծում են կնոջը: Հարբեցողութեան աջակցման մասին էլ լինէնք, որ վարչապետը մի քանի ամիս առաջ ներկայ էր օղու նոր գործարանի բացմանը: Բայց հիմնական պատճառը, որ գանգոռները չեն ապստամբել, նրանց քաղաքական գիտակցութեան պակասն է. պետական քարոզչամեքենային յաջողուած է բնակչութեան տնտեսական շահի գիտակցութիւնը մթազնել ազգային-մշակութային խնդիրների միջոցով:

Ժամանակակից լիբերալ-դեմոկրատական պետութիւնը հարկային հաւասարութեան պետութիւն է, ի տարբերութիւն ֆէոդալական բռնատիրութեան: Ֆէոդալական պետութիւնում վերնախաւը՝ առաջին եւ երկրորդ դասերը՝ արիստոկրատիան եւ եկեղեցին, հարկեր չէին վճարում. հարկեր վճարում էր երրորդ դասը: Ինչպիսի՞ն է եղել ֆէոդալիզմի, աւելի շուտ՝ բացարձակ միապետութեան հարկային կառուցուածքը: Հիմնական եկամուտները եկել են ակցիզներից եւ մաքսային տուրքերից, ինչպէս նաեւ երրորդ խաւից գանձուող գլխահարկից: Առեւտրային գործունէութիւնը կարգաւորուած էր «կապիտուլյացիաների»՝ «յանձնումների» միջոցով. օրինակ՝ ցորենի կամ աղիւսի առեւտրի մենաշնորհը յանձնում

էր մէկ ընկերութեանը: Հետեւութիւն. օլիգոպոլիաները եւ մոնոպոլիաները վերացնելու համար հարկաւոր է վերացնել ֆէոդալիզմը, բացարձակ միապետութիւնը եւ ճորտատիրութիւնը:

Ինչպէ՞ս է առաջացել լիբերալ, իսկ ապա՝ լիբերալ-դեմոկրատական պետութիւնը: Ուիլյեմ Պիտտ Կրտսերը Նապոլիոնեան պատերազմների ժամանակ մտցնում է եկամտահարկ, որն աստիճանաբար շահութահարկի հետ դառնում է հիմնական հարկատեսակ եւրոպական պետութիւններում: Անցում է կատարուած անուղղակի հարկերից ուղղակի հարկերին: Եւրոպայի եւ Հս. Ամերիկայի դեմոկրատական գանգոռներն իրենց սկսում են հպարտօրէն անուանել հարկատուներ, ի տարբերութիւն միջնադարի, երբ հարկատու լինելը նշանակում էր ունենալ ստոր կարգավիճակ: Այդպէս է նաեւ Հայաստանում, «նալոգ» տուղղները ցածր դաս են, «նալոգ» հաւաքողները՝ «աւտարիտետներ»: Սրանից 90 տարի առաջ լիբերալիզմի պատմաբան Գվիլիո դէ Ռուջերոն գրել է. «Որպէս օրէնք, որքան բարձր են հարկերը, այնքան աւելին են հպատակների ազատութիւնները եւ որքան ցածր են, այնքան ազատութիւնը քիչ է: Ազատ պետութիւններում բարձր հարկերը հաւասարակշռում են ազատութեամբ, բռնապետութիւններում պետական ցածր հարկերը ծառայում են փոխհատուցում ազատութեան կորստի համար»: Այս դրոյթը հիմնականում վերաբերում է վերնախաւին. հասարակ քաղաքացիները միշտ էլ հարկեր վճարել են, բայց Հայաստանում նրանք մնում են անազատ:

Ժամանակակից բոլոր երկրները, նրանց ճշդ մեծամասնութիւնը, ընդունում է, որ կառավարութիւնները պէտք է ձեւաւորուեն ընտրութիւնների միջոցով, այլ է, որ բազմաթիւ երկրներում այն կեղծում է: Ընտրութիւնները կեղծելու հիմնական գործօնը օրէնքի առաջ հաւասարութեան բացակայութիւնն է: Այս արժէքի ներդրման համար կարեւորագոյն գործօն է հարկային քաղաքականութիւնը: Եւ ընդհակառակը. հարկային արտօնութիւնները ստեղծում են քաղաքական եւ տնտեսական ռեսուրս ընտրութիւնները կեղծելու համար:

ՀԱԿ-ի պահանջներից մէկն էլ բիւջէի բաժինը համախառն ներքին արդիւնքում 22 տոկոսի հասց-

նելն է: Որպէս օրինակ կարելի է բերել մերձբալթեան պետութիւնները, որտեղ այդ ցուցանիշը 30 տոկոսին մօտ է կամ աւելին, իսկ որոշ արեւմտաեւրոպական երկրներում գերազանցում է 40 տոկոսը: Դեռեւս 2002 թ. Հայաստանում այդ ցուցանիշը մօտ էր քսան տոկոսին: Աստիճանաբար այդ ցուցանիշը իջաւ մինչեւ 14 տոկոս, ապա մէկերկու տոկոս աճեց: Նոյնիսկ չաւարտուած պատերազմը նրանց զուգացում չեղաւ. յաղթեց ազահոլութիւնը, գիշատիչ բնազդները, հակապետական մտածողութիւնը: Գումարային առումով դա 7-8 միլիարդ դոլար է, որ կարող էր ուղղուել կրթութեանը եւ գիտութեանը, սոցիալական ոլորտին, արտադրութեանը, վերջապէս՝ բանակին: Պարզ է, որ այդ գումարը դժուար կը լինի վերադարձնել. այն մեծամասամբ փոշիացուել է:

Ժամանակակից պետութեան կայացածութեան հիմնական ցուցանիշը, բռնութեան մենաշնորհից յետոյ, կառավարութեան կողմից հարկեր հաւաքելու ունակութիւնն է: Երբ հարկերի բաժինը ՀՆԱ-ում իջաւ 14 տոկոսի, միջազգային կազմակերպութիւնները, մասնաւորապէս Համաշխարհային բանկը, խուճապ բարձրացրին: Բանն այն է, որ այդ ցուցանիշը շատ մօտ է փլուզուած կամ փլուզմանը մօտ երկրների ցուցանիշին: Սակայն վարչապետ Սերժ Սարգսեանը հրաժարուեց կատարել ՀԲ խորհուրդները, ինչպէս մի քանի տարի առաջ նախորդ վարչապետը մերժեց աշխատավարձը եւ նպաստները բարձրացնելու յանձնարարականը: Հայաստանը չի կարող փլուզուել, քանզի արտաքին քաղաքական հանգամանքների բերումով բանակը եւ ոստիկանութիւնը պատրաստ են ճնշելու բողոքի ցանկացած դրսեւորում, քանզի նրանք դեռ մնում են նուիրուած իշխանութիւններին:

Սովորաբար կառավարութիւններն աշխատում են աւելացնել հարկերի բաժինը ՀՆԱ-ում. դա պետութիւնն ամրապնդելու, դեմոկրատիան զարգացնելու հիմնական գործիքն է: Հայաստանի կառավարութիւնները վերջին 10 տարում վարել են պետութիւնը եւ դեմոկրատիան թուլացնելու քաղաքականութիւն: Մեխանիզմները շատ պարզ էին. մի խումբ խոշոր բիզնեսմենների ազատել հարկերից. նրանք վճարումներ կատարում էին միայն բիւջետային «անցքերը» փակելու համար: Օլիգարխներ-իշխանութիւն յարաբերութիւնները դառնում են անձնաւորուած, ստանում են վասալական

կախուածութեան բնոյթ: Այս խաղին մասնակցելուց հրաժարուելը ձեռնակատիրոջ համար նշանակում էր դուրս նետուել բիզնեսի ոլորտից: Ֆէոդալականացման միւս գործօնը հարկերի կառուցուածքն է, նրա «ակցիզացումը» եւ «մաքսայնացումը», շեշտադրումն անուղղակի հարկերի վրայ դնելը: Մեր խոշոր ընկերութիւնները կարող են մոռնել մի քանի միլիարդ դրամի անուղղակի հարկ եւ ընդամէնը մի քանի տասնեակ միլիոն դրամի ուղղակի հարկեր: Իսկ անուղղակի հարկը նշանակում է, որ հարկը փաստօրէն մոռնել է սպառողը, բնակչութեան լայն խաւերը:

21-րդ դարի ընթացքում դեմոկրատիայի յաջողութիւնները յետկոմունիստական աշխարհում համեստ պէտք է գնահատել: Դեմոկրատական համակարգին շատ թէ քիչ ինտեգրել յաջողուեց արեւելաեւրոպական երկրների մի մասին, միւսները՝ ինչպէս Ուկրաինան, Թուրքիան, Կիրգիզիան եւ Վրաստանը, տապալուեցին այս գործընթացում: Հիմնական մասը՝ Հայաստանը, Ղազախստանը եւ այլն, «յստակ եւ հետեւողական կամք» ցուցադրեցին, մերժելով լիբերալ-դեմոկրատական արժէքները եւ գերադասելով ֆէոդալիզմը: Տարբերութիւններ «նէֆեոդալական» երկրների միջեւ իհարկէ կան: Քաղաքական համակարգը Ուզբեկիստանում միակուսացական է, Հայաստանում՝ մէկուկէսական: Վերջինիս իմաստն է. բռնապետութիւն ինչպէս միակուսացական երկրներում եւ «գետտոյացուած», մարգինալացուած իրաւազուրկ ընդդիմութիւն: Ընտրութիւնից ընտրութիւն Հայաստանում քուէ-արկութեան քաղաքական արժէքն անընդհատ ընկնում է: Ինչպէս գիտենք, մեր իշխանական վերնախաւն ընտրութիւնների անցկացումը սկսել է վստահել կաշառքի մեխանիզմին, իսկ վերահսկումը՝ քրէական խաժամովին. նոյնիսկ աղմինիստրատիւ ռեսուրսը երկրորդ պլան է մղուել:

Պետութեան բնոյթը պայմանաւորուած է նրա ֆինանսներով: Եթէ պետութիւնը համեմատենք կաթսայի հետ, ապա կարող ենք ասել, որ երեք վիճակ կարող է լինել: Առաջին, կաթսան ամբողջական է: Երկրորդ, կողքից անցքեր ունի եւ ջուր լցնելուց նրա մի մասը թափում է: Եւ երրորդ, անցքերը յատակին են: Պատկերաւոր ասած, վերջին 10 տարում իշխանութիւններն անցքեր բացեցին պետութեան կաթսայի յատար-

Շարք էջ 17



Blue Cross of California  
Authorized Agent



Blue Shield of California  
Authorized Agent

## SERVING SINCE 1975

# BEDROS S. MARONIAN

(818) 500-9585  
BMaronian@AOL.com

FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ





A.B.A. INSURANCE SERVICES

# ԼԻԲԱՆԱՆ - ՔՍԱՆՆԵՐՈՒ 95-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ

## ՀՆՀԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄՆԱՅ ՔՍԱՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԻՐ ՈՒՂԵԳԻԾԻՆ ԿՐԱՅ

Մայր Հայրենիքէն մինչեւ Սփիւռքի տարբեր աստիճաններ վրայ, արժանավայել շուքով ոգեկոչուեցաւ Հնչակեան Քսան Կադախաններու նահատակութեան 95-ամեակը: Ամենուրեք, ոգեկոչական հանդիսութիւններն ու հաւաքները առիթներ եղան վերահաստատելու Հնչակեան Կուսակցութեան կողմէ նախագծուած եւ Քսաններուն նահատակութեամբ սրբազործուած ազգային ուղեգծին մեր ժողովուրդի հաւատարմութեան ուխտը:

Լիբանանի մէջ, Երեքշաբթի, 15 Յունիս 2010, երեկոյեան ժամը 7:30-ին, Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէճի շրջափակին մէջ տեղի ունեցաւ Հնչակեան Քսան Կադախաններու յիշատակին նուիրուած աւանդական հանդիսութիւնը:

Հանդիսութեան ներկայ էին ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամներ ընկեր տօքթ. Եղիկ Ճէրէճեան եւ Յակոբ Տիգրանեան, պետական երեսփոխաններ ընկ. Սեպուհ Գալփաքեան, մեթր Սերժ Թուրսարգիսեան, Շանթ Չինչինեան, Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան կցորդ Աշոտ Վարդանեան, ՄԴՀԿ Լիբանանի վարիչ Մարմնի ատենապետ ընկեր տօքթ. Մարտիկ Ժամկոչեան եւ անդամներ, հայ քաղաքական քոր կուսակցութիւններու ներկայացուցիչներ, Նոր Հաճըն թաղի հոգեւոր հովիւ Տէր Նարեկ Քահանայ Ճէճինեան, մշակութային, բարեսիրական, մարզական միութիւններու եւ մամուլի ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ հոծ բազմութիւն մը:

Հ.Մ.Մ.ի փողերախումբին ընկերակցութեամբ, յանուն ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան եւ Լիբանանի Շրջանի վարիչ Մարմնի՝ ծաղկեպսակներ գետեղուեցան անմահ Փարամազի կիսանդրին առջեւ: Լիբանանի, Հայաստանի եւ Մայր կուսակցութեան քայլերգներու յոտնկայս ունկնդրութենէն ետք, ընկերուհի Մարո Շորճեան բացուած յայտարարեց Քսաններու ոգեկոչման հանդիսութիւնը: Ան ըսաւ յատկապէս. «1915... Յունիս 15... Պոլսոյ Պալատ հրապարակ... քսան կախաղաններ: 95 տարիներ անցած են այն օրէն երբ Հնչակեան Քսան հերոսներ իրենց ամէնէն թանկագինը զոհեցին յանուն գաղափարի, յանուն հայրենիքի եւ յանուն հայ ժողովուրդի ազատութեան եւ բարօրութեան: »Հոն ուր կախաղաններն են ճօճուած, Ազատութիւն է ման գալիս, հոն՝ ուր մեռելներն են ննջուած՝ Յարութիւնն է մօտալուտ»:

«Անոնք կախուեցան որովհետեւ հաւատացին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան սկզբունքներուն: Հաւատացին, որ «մարդուն միակ եւ լաւագոյն ուղին պայքարի ուղին է: Պայքարիլ՝ տառապող աշխատաւորութեան յաղթանակին համար: Գործել յանուն մարդկային երջանկութեան: Մէկ խօսքով՝ պայքարիլ որ մարդը ապրի ամենազարգացած միջոցներով: Այս է կեանքի վերջնական նպատակը:

«Պատմական այս իրադարձութիւնը, Հնչակեան հերոս Քսաններու կախաղան բարձրացումը թուրք իթթիհատականներու կողմէ, այսօր եւս մեզ կը մղէ արթնութեամբ, զգաստութեամբ եւ ինչպէս զիւրանագիտութեամբ դիմագ-



րաւելու այն մարտահրաւէրները՝ որոնք կրնան վտանգել Հայաստանի եւ Ղարաբաղի ինքնութիւնն ու գոյութիւնը:

«95 տարիներ ետք, այսօր, Հնչակեան կուսակցութիւնը իր սոցիալիստական եւ դեմոկրատական սկզբունքներէն մեկնած՝ կը շարունակէ պայքարիլ Հայաստանի ազգային, ընկերային, տնտեսական եւ քաղաքական վերելքին համար»:

Հանդիսութեան առաջին բանախօսն էր Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Լիբանանի վարիչ Մարմնի անդամ ընկեր Կիրակոս Թիւթիւնճեան: Ան ըսաւ. «Եթէ պէտք ըլլար հայ ժողովուրդի ազգային ազատագրական պայքարը խտացնել միայն մէկ խորհրդանիշով, անկասկած Հնչակեան Քսան Կադախանները կ'ըլլան լաւագոյն թեկնածուն, իրենցմով խորհրդանշելու՝ 19 եւ 20-րդ դարերու այն վիթխարի պայքարը, որ կոչուեցաւ հայ ազգային-ազատագրական պայքար: Որովհետեւ, Քսաններն ու անոնց կուսակցութիւնն էր, որ հետեւողականօրէն շարունակեցին պայքարի գիծը՝ համիտեան թէ իթթիհատական վարչակարգերու տարբեր փուլերուն:

«Ոմանք կը յոխորտային թէ իթթիհատէն ետք Թուրքիոյ ամենահզօր կազմակերպութիւնն են, այն պահուն, երբ Թալէպի աստիճանաբար կը չէզոքացնէր անկախութեան մասին մտածողները:

«Ոմանք ուրախ էին միայն այն բանին համար, որ երիտթուրքերը զիրենք կը նկատէին հայութեան ներկայացուցիչները:

«Ասիկա տակուրն նախերգանքն էր Արեւմտահայաստանի կորուստին ու հայկական հրէշային ցեղասպանութեան:

«Տակաւին ոմանք՝ համաձայնագիր կնքելով իթթիհատին հետ, յանձնառու կը դառնային պաշտպանել կայսրութեան ամբողջականութիւնը եւ կը մերժէին արեւմտահայութեան անկախութեան ձգտումները:

«Պատմութիւնը պիտի ներէ՞ արդեօք քաղաքական այս բարոյալքումի հեղինակներուն, որոնք փաստօրէն քնացուցին, հանդարտեցուցին ժողովուրդը, միամիտ ու մահաբեր օրօր երգելով՝ օսմանեան հայրենիքին ու ազգին:

«Քսանները բարոյական այն մեծութիւնն են, որ եզակիօրէն պատմութեան դիմաց փրկեց հայ յեղափոխական եւ քաղաքական մտքին պատիւը: «Եթէ ուզուծ ես երգը լսեն, ժամանակիդ շունչը

դարձիր», ըսած է Եղիշէ Չարենց: Քսանները դարձան իրենց ժամանակին շունչը, բայց նաեւ զոհը, նահատակը, որովհետեւ ինքնադրոշմ յանդգնութեամբ մը ՄԴՀնչակեան կուսակցութիւնը կէօստէնչէի 7-րդ պատմական համագումարին որոշեց հաշուեյարգարի ենթարկել իթթիհատի դեկավարութիւնը:

«Վկայութիւններ չեն պակսիր Քսաններու մասին: Քսանները՝ իրենց իրապաշտ հեռատեսութեամբ, փայլք տուին հայ ժողովուրդին, հուսկ բաժնելու համար անոր սեւ ճակատագիրը:

«Քսաններուն հերոսական նահատակութիւնը ոգեկոչելով եւ այդ ոգեկոչումներուն ընդմէջէն մեր բոլոր հերոսներուն յարգանք ընծայելով չի սահմանափակուիր մեր այսօրուան հաւաքը: Ինչպէս միշտ, այս առթիւ եւս, կ'ուզենք ընդգծել Քսաններու պատմական դերին նշա-

նակութիւնը»:

Անդրադառնալով մեր ժողովուրդը չուզող ազգային հարցերուն, ընկեր Թիւթիւնճեան ըսաւ. «Լիբանանահայ համայնքը այսօր կ'ապրի համընդհանուր տեղատուութիւն: Բոլորս ունինք հաւաքական պարտականութիւն: Ի գուր մեր կարողականութիւնը կը սպառենք ամուլ, անիմաստ եւ անտեղի բանալէճերով:

«Միջին Արեւելքի զարգացումները մեզի նախազգացնել կուտան թէ կրնանք դիմագրաւել ծանր օրեր: Քսաններու կուսակցութիւնը Մայր Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ, իր գոյնուած բոլոր ոստաններուն մէջ, զօրավիգ կեցած է երկիրներու անկախութեան, զերիշխանութեան եւ պաշտպանած ընկերային արդարութիւնը: Դիւրին եղած չէ անոր ճանապարհը: Այդ երկարաշունչ պայքարի ընթացքին՝ Քսաններու կուսակցութիւնը տուած է բիւրաւոր նահատակներ: Սակայն մեր կուսակցութիւնը զոհողութիւններու կուսակցութիւնն է, նուիրումի՝ կուսակցութիւնը:

Մենք այսօր ալ անվարան կը յայտարարենք, որ կը մնանք Լիբանանի ամբողջականութեան եւ ազատութեան պաշտպանութեան դիրքերուն վրայ:

Մենք՝ ժողովրդավար, անկախ եւ զերիշխան Լիբանանը կը տեսնենք՝ զօրաւոր պետականութեան կառուցման միջոցով միայն: Անոր պետական ամուր կառուցներուն եւ հզօր բանակին միջոցով միայն:

«Սփիւռքի մէջ հայապահպանումը, հաւատքը միամականու-

Շարք էջ 17

*Հուկերայիս*  
*Դերայիս Ծանկ*  
*եւ Չուկերոյս*

Կազմակերպութեամբ՝  
**ՅԵՏԱԶԳՈՒԱԾ**  
 ԱՐՄԸՇ ԿՐՏՈՒԿ  
 ՄԱՍՆԱԾԻԻՂԻ

**Շաբաթ, 26 Յունիս 2010**  
 Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ  
 1060 North Allen Avenue  
 Pasadena, CA 91104

Տոմսերու համար դիմել՝  
**(626) 797-7680**





# Massis Weekly

Volume 30, No. 23

Saturday, JUNE 26, 2010

## OSCE Minsk Group Condemns Deadly Fighting In Karabakh Four Armenian Soldiers Killed After Azerbaijani Sabotage Unit Attack

The U.S., Russian and French mediators strongly condemned last week's deadly fighting between Armenian and Azerbaijani forces around Nagorno-Karabakh and urged both parties to "exercise restraint" late on Monday.

In a joint statement, diplomats from the three mediating powers co-chairing the OSCE Minsk Group noted that the overnight gunfight, which left four Armenian and one Azerbaijani soldiers dead, took place "immediately" after the June 17 Armenian-Azerbaijani summit in Saint Petersburg, Russia. But they stopped short of explicitly blaming either side for the incident.

"Such an incident is an unacceptable violation of the 1994 Ceasefire Agreement and is contrary to the stated commitment of the sides to refrain from the use of force or the threat of the use of force," reads the statement.

"The use of military force, particularly at this moment, can only be seen as an attempt to damage the peace process," it adds. "Therefore the Co-Chairs call upon the sides to exercise restraint on the terrain as well as in their public communications and prepare their population for peace and not for war. They reiterate that there is no alternative to a peaceful negotiation solution of the conflict and that war is



not an option."

### Four Armenian Soldiers Killed

Armenia accused Azerbaijan on Saturday of "doing everything" to scuttle the Nagorno-Karabakh peace process after four Armenian soldiers were killed in the worst Armenian-Azerbaijani truce violation reported in more than two years.

Citing the Karabakh Armenian military, Armenia's Defense Ministry said the fighting occurred in the north-east of Karabakh overnight. It said an Azerbaijani sabotage unit attacked Karabakh Armenian positions there,

killing four and wounding as many soldiers before retreating into Azerbaijani-controlled territory.

"As a result of measures taken by the Armenian side, the enemy's advance was stopped," the ministry said in a statement. "The enemy retreated, leaving a killed soldier and weapons on the battlefield."

The Azerbaijani Defense Ministry did not immediately comment on the incident. The Azerbaijani APA news agency confirmed and identified the

Continued on page 3

## Iran Against U.S. Peacekeeping Role In Karabakh

Iran is strongly opposed to U.S. involvement in a multi-national peacekeeping force that would presumably be deployed around Nagorno-Karabakh after the signing of an Armenian-Azerbaijani peace accord, a senior Iranian diplomat warned on Wednesday.

Such a peacekeeping operation is an important element of the current and previous peace proposals made by the U.S., Russian and French mediators spearheading international efforts to settle the Karabakh dispute.

Analysts in and outside the region have long speculated about the possible composition of foreign troops that would enforce a future peace deal. The mediators' existing "basic principles" of a peaceful settlement apparently leave that question unanswered.

According to Iran's ambassador to Armenia, Seyed Ali Saghayan, the United States is keen to have troops in Azerbaijan's Fizuli district, which borders Iran and was mostly occupied by Karabakh Armenian forces in 1993. He claimed that that would pose a serious threat to the Islamic Republic given its extremely tense relations with Washington.

"Iran is the only country adjacent

Continued on page 4

## Congressman Pallone Calls On U.S. Government To Restrict Military Assistance To Azerbaijan

Congressman Frank Pallone, Jr. (NJ-06), co-chair of the Congressional Caucus on Armenian Issues, condemned attacks by the armed forces of Azerbaijan on soldiers of the Nagorno Karabakh Republic.

"I condemn these attacks in the strongest terms. The attempt to penetrate the line of contact with Nagorno Karabakh defenses was an unacceptable provocation and an attempt to precipitate further conflict," Frank Pallone said in a statement.

"I also want to express my deepest condolences to the families of the four soldiers who lost their lives due to these attacks. Their dedication to protecting a young but flourishing democracy exercising its right to self-determination is admirable," he said.

"The fact that these attacks were unprovoked and came just hours after a meeting between the presidents of Armenia and Azerbaijan with Russian

Continued on page 4

## Over A Third Of Armenia's Economy Gone Missing

Where is Armenia's economy? Well, to hear the World Bank's country chief tell it, more than a third of the economy is closeted away in a world impervious to accounting and tax collection. Light must be shed on the shadow economy for Armenia to make ends meet, Aristomene Varoudakis said at a June 18 press conference.

"It is a very important challenge to formalize this informal economy so as to increase tax revenues and be able to pay for much-needed social services," he said.

Armenia's government described

poor tax administration as one of the weakest spots in its economic stewardship and promised a massive overhaul of the system. That would mean a "softer" regime for business owners and fewer encounters with tax collectors.

Varoudakis said the World Bank will provide \$25 million to underwrite the reform. The World Bank, IMF and Russia have provided hundreds of millions of dollars in economic aid to blunt the effects of the global financial crisis, a sharp decrease in foreign remittances and bust of the country's construction bubble.

## Israeli Knesset To Hold Session On Armenian Genocide

By Jonathan Lis  
HAARETZ.com

Despite the diplomatic tensions between Israel and Turkey aroused by last month's botched raid on a Gaza-bound flotilla, the Knesset is scheduled to hold a session later this month on the Armenian genocide of 1915, which is attributed to the Ottoman Turks.

But due to an agreement between the government and the Knesset, the discussion will be held not in the plenum, but in a Knesset committee - most likely the Foreign Affairs and Defense Committee.

Committee chairman Tzachi Hanegbi said Thursday that if, as expected, the Knesset House Committee selects the panel he heads to host the session, he will probably schedule the hearing for two weeks from now.

On Wednesday, several U.S. congressmen from both parties announced that they were reconsidering their own positions on whether Turkey's treatment of the Armenians during World War I should be labeled genocide. At a press conference, the congressmen expressed concern over Ankara's deepening ties with Iran at the expense of those with its traditional ally Israel.

The Knesset session is the brain-

- Նա գրում է. Ինձ իմ երկիրը տարեք քարշ տալով մարմինս անծ քաղաքների հրապարակներից, շարտելով ալիքների փոխանցիկ երախններից: Ո՞ր ինձ գորշ ասֆալթը մորթազերծ կ'անի, մսակեր ձկները կը վերջացնեն ինձ:

Ինձ իմ երկիրը տարեք վատախելի ճանապարհով. հետեւեցէք որեւէ կռուակի, նա հաստատ վերադառնում է դէպի մեր երկիրը:

Բանաստեղծ մտաւորականը ապրում է (ապրեց) իր հայրենիքի ու ժողովրդի կեանքով:

Իսկական մտաւորական Կարիկ Պասմաճեանն ապրում է նաեւ ուրիշների կեանքով, մարդկութեան կեանքով... Նա բողոքեց Չիլիի ֆաշիստական խուճուղի ոճրագործութիւնների դէմ: 1973 թ. Սեպտեմբերի 11-ին նրա սիրտը Սանթյագոյէ կտրուեց:



Չիլիի հրապարակում էր: Խուճուղի թաղում էր Չիլիի եւ Լատինական Ամերիկայի ժողովուրդների մեծ բանաստեղծ Պաբլօ Ներուդային, իսկ Կարիկ Պասմաճեանը գրում է նրան նուիրուած մահախօսականը.

#### ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Վառում են գրքեր բանաստեղծութեան:

Հեռու հրապարակից, կշտացած զենքի տակ թաղում են բանաստեղծին:

Երկունք ապրած բառեր կրակ կուլ տալով ինքնասպանուում են:

Բանտի պատերը փոր են տալիս քո քաղաքում: Գնդակահարում են անգամ հաշմանդամներին, եւ իւրայիններին կոծքի արիւնցի ժանգոտում են փշալարերը:

Գրքերդ վառողների որդիները շուտով անգիր պիտի անեն եւ արտասանեն այրող բառերդ իրենց դժբախտ հայրերի շիրիմների վրայ:

Հայ բանաստեղծ մտաւորականը բողոքեց եւ վատահ էր, որ արդարութիւնը յաղթանակելու է:

Կարիկ բանաստեղծ մտաւորականն ապրում է (էր) ոչ միայն իր հայրենիքի ու ժողովրդի կեանքով, այլ աշխարհի հոգսերով: Նա Իրանում թէեւ երբէք չէր եղել ու մեզանից ու իր ուսանող ընկերներից էր լսել իրանի բռնակալ շահի ռեժիմի ոճրագործութիւնների մասին, սակայն ինչպէս զգում ենք նրա խորաթափանց բանաստեղծութիւններից, նա մտովի յաճախ է եղել Թեհրանի անասարտուռ էլիւզներում, գրուցել խօսքի ազատութեան, սոցիալական արդարութեան ու մարդու իրաւունքների համար շահական բռնակալ ռեժիմի դէմ պայքարող պարսիկ, հայ ու այլ ազգի մարտիկ-քաղբանտարկեալների հետ: Տառապել ու վկան է եղել նրանց հերոսական ու լուսաւոր կեանքի վերջալույսին՝ գնդակահարութեանը:

Այսպիսի խորը ստեղծութիւն

բռնակալութեան դէմ կարող էր ունենալ ազատութեան, արդարութեան ու ժողովրդավարութեան համար պայքարող լայնախոհ բանաստեղծ-մտաւորականը:

Եւ ահա Կարիկ Պասմաճեանը գրում է.

Բոլորի չիշտակին, որոնք գաղափարի համար գնդակ կ'ընդունին ու կը հեռանան:

#### ԳՆԴԱԿԱՀԱՐՈՒՄ

Փորձը շատոնց վերջացած է: Ընտրանի կրակովներու եւ մասնագէտ դահիճներու հետ է ձեր գործը:

Պատերազմ չկայ. Հազարաւոր փամփուշտ չի վատնուիր

մէկ կեանք աւարտելու համար: Խաղաղութիւնը դէմ է ամէն մարդուն,

Խաղաղութեան ատեն՝ պէտք է մարդն սպանել խնայողութեամբ:

Գնդակի հետքեր կան սեւ ու երկար պատին վրայ. Երեմակ, ճերմակ սպիներ գիրեր անվերծանելի: Հաստատ բան մը ըսել կ'ուզենք, բայց կը պակսի քանի մը տառերէն՝ շարունակեցէք գնդակահարել.

մինչեւ որ պատուիրանի պէս, աղաւնիի տեսքով, սեւ պատի մեջէն յարութիւն առնի պատգամը ձեր մակ:

Մի~ լաք մայրեր. դահիճներուն մայրերը պիտի լան այս գիշերը:

Հեռացող եղբայրներ, որդիներ լոյսի. ամէն մարդ չի կրնար ձեզի պէս ճամբորդել:

Մտաւորական բանաստեղծը պատասխանատուութիւն է զգում մարդու, նրա իրաւունքների նկատմամբ եւ իր պարտքն է համարում բարձրաձայն բողոքել ու անարգանքի սիւնին գամել բոլոր կարգի բռնապետներին:

Ո՞ւր են Հայաստանի ու սիւնիւքի մտաւորական բանաստեղծները, գրողները, նկարիչները, երաժիշտները, դերասանները, իմ բազմաբնուէր... Ինչո՞ւ նրանց բողոքի ձայնը չենք լսում ընդդէմ բռնութեան, անարդարութեան, ժողովրդի շահագործման... Ու՞ր է հայ մտաւորականի քաղաքացիական պարտքի զգացումը *civil courage*.

Յուսանք գրողների համահայկական համաժողովին մասնակցող մտաւորականները.

• Հրապարակում «վառելու» արժանի մի գործ կը բերեն իրենց հետ:

• Ժողովրդի շահերը պաշտպանող այնպիսի ելույթներ կ'ունենան, որի համար «բերանները կարելու» պատուին կ'արժանանան

• Չիւուած Մեսրոպ Մաշտոցի ծանր հրետանի ՅՅ թիւղանթներով՝ կը պաշարեն նախագահի պալատն ու Ազգային ժողովը եւ կը պահանջեն շահագործող էլիտար դասակարգից՝ ձեռքները հեռու հայրց լեզուից ու մշակոյթից:

• Դադարեցրէք օլիգարխների տնտեսական աւագակութիւններն ու պետական հարստութեան կողոպուտը:

• Սահմանափակել ազատ շուկայական տնտեսութեան ջունքային անօրինութիւնները եւ դադարեցնել հայ աշխատող ժողովրդի սանձարձակ շահագործումը:

Կարիկ Պասմաճեանի սիրտը Գեղամա լեռներում է...

Aramais.m@live.se  
Մթնբնակ, Շուէտ

Կազմակերպութեամբ  
ԳՐԱՍԱՀԱՅ ՄՈՒՌՔԻՆԸ ՄՇԱԿՈՒԹԱՅՈՒ ՅԱՆՉՍԱՌՈՒՄԻ  
և Արարատ Տան Էսքիճեան Թանգարանի  
Դաստիարակութեան կենտրոնի  
Աշխարհափոշոյակ գեղամակարիչ՝  
**ԱՐՇԻԼ ԿՈՐԵԻԻ**  
Կեանքն ու գործերը  
Բանախոս՝  
Վաղագիր և մտաւորական ՄԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ  
Հեղինակ՝ ԱՐՇԻԼ ԿՈՐԵԻ ՎԱԿԻՆ  
Տեղի կ'ունենայ Կոլորադոյի, Յուսիս 27, մասն. 5:30-ին Արարատ Տան ԷՍՔԻՃԻՈՒՄ Թանգարանին մէջ  
15105 Mission Hills Road, Mission Hills, CA 91343  
Տեղեկութեան համար Յոսիսիւմէն Կ. Աւեդիան (818) 800-1976 cell Թանգարան (818) 838-4862  
E-mail: mgoschin@mindspring.com  
Organized by  
**The Cultural Committee of the OIA**  
And Ararat Eskiikian Museum  
Lecture Evening  
**"The life and works of Arshile Gorky"**  
By Armenian novelist **Sarkis Vahakn**  
The author of Arshile Gorky's Novel  
Sunday, June 27, 2010, at 5:30 P.M. at the Ararat-Eskiikian Museum  
15105 Mission Hills Road, Mission Hills, CA 91343  
For more info, please call Dr. Ohannes Kulak Avedikyan at 818-800-1976  
Ararat-Eskiikian Museum at (818) 838-4862  
E-mail: mgoschin@mindspring.com  
Reception

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՎ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՉ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA ԵՐՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

### ՎԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՅՔԱՅՄԱՆ ԵԳՆԱԺԱՍ

#### ՌՈՒՅՐԹ ՍԱՖԱՐԵԱՆ

«Քուշէշ» դպրոցի փակում, «Ալիշան» դպրոցի փակում, կիսա-ւեր պատերի վրայ հայ գրողների պատկերներ, որոնք յուշում են թէ մի ժամանակ սա հայկական դպրոցի (Թունեանի) բակն է եղել... Համայնքը փոքրանում է, ժողովուրդը գնում է Ամերիկա, աշակերտութեան քանակը պակսում է, բնականաբար դպրոցները փակուում են եւ կը շարունակուեն փակուել: Իւրաքանչիւր դպրոցի, միութեան, սրահի կամ այլ հաստատութեան փակումն ու դրա շէնքի վաճառքը, առաջացնում է յուզումներ, բորբոքում նստալզիայի գգացումներ, եւ ծայր է տալիս յուսախաբութեան ու բողոքի արտայայտութիւնների:

Այս փակումների շարանի վերջին դէպքը Բահար քաղաքամասում գտնուող «Ռոստոմ» օրիորդաց դպրոցի փակման որոշումը կամ դրա քննարկումն է: «Ռոստոմ» դպրոցի աշակերտութեան թիւը հասել է մօտաւորապէս 100-ի: Ուրեմն տրամաբանօրէն, ցանկալի է, որ եթէ հնարաւոր լինի, դպրոցը միատեղել մի ուրիշ դպրոցի հետ, որն այս դէպքում «Արաքս»ն է, որը գտնուում է «Ռոստոմ»-ից ոչ շատ հեռու: Այսպիսով կը լուծուեն նաեւ դպրոցի նիւթական դժուարութիւնները: «Արաքս» շաբաթաթերթի հաղորդագրութեան համաձայն այսպէս էլ տրամաբանել է Կրթական խորհրդի նախագահ Հրայր Շահնազարեանը, «Ռոստոմ» դպրոցի աշակերտութեան ծնողների հետ հանդիպման ժամանակ: Սակայն այս բացատրութիւններով չեն համոզուել ծնողները: Նրանք

ասում են՝ ի՞նչ նիւթական դժուարութիւն, երբ նորերս էք 4 միլիարդ թումանով վաճառել «Արամ» սրահը, երբ համայնքն ունի մեծաթիւ կալուածներ, ... Լաւ, եւթադրենք համայնքն հէնց այնքան հարուստ է, որքան «Ռոստոմ» դպրոցի աշակերտների ծնողներն են ասում, եւ կարող է լուծել այդ դպրոցի նիւթական դժուարութիւնները, բայց արդեօք խելքին մօտ է 100 աշակերտի համար օգտագործել դրա քանիպատիկ աշակերտութեան համար նախատեսուած շէնքը:

Ինչո՞ւ Կրթական խորհրդի պարզ տրամաբանութիւնը չի համոզում ծնողներին: Արդեօք դրա պատճառը ազգային մարմինների նկատմամբ ժողովրդի վստահութեան քայքայումը չէ: Իրականում նրանց կասկածներն աւելի մեծ են՝ կարծես Թեմական ծրագրել է ամէն բան ծախել, փողը վերցնել եւ գնալ: Պէտք է ընդունել, որ սա տարիների թաքուն, ոչ թափանցիկ աշխատեւածեւի արդիւնքն է: Սա տեղեկութիւնները ժողովրդից թաքցնելու հետեւանքն է: Այդ գործելակերպը չանգել է այնպիսի խորն անվստահութեան, որ շատ դժուար կը լինի կարճ ժամանակում վերացնել այն: Թէթ Առաջնորդը «Յոյս»-ի հետ հարցազրոյցում, այն մասին թէ ժողովուրդը մտածում է կալուածների յանձնախմբի տրամադրութեան տակ է գտնուում մեծ հարստութիւն, ասում է. «Երանի այդպէս լինէր», իսկ Պատգամաւորական ժողովում խօսքը բիւջէի բացի եւ եկամուտի վստահելի աղբիւրների բացակայութեան մասին է: Մի կողմից

Շար.բ էջ 18

### ԻՆՉՈՒՆ ՊԱՐԶ Է, ԻՆՉՊԵՍԸ՝ ՄՇՈՒՇՈՏ

#### ԱՆԻՐԱՆԻԿ ՄԻՄՈՆԵԱՆ

Իրանահայ մերօրեայ վիճակը այնքան էլ նախանձելի չէ: Տասնամեակներ հայաբնակ եղած, ամբողջ խոզեատան նահանգի բնակավայրերը դատարկեցին պատերազմից յետոյ: Կասպից ծովի ափամերձ հայաբնակ շրջաններին պատել է նոյն աղէտը: Վտանգը գնալով մեծանում է. Շիրազն արդէն հայաթափելու եզրին է, երաշխաւորած վիճակ չունի Թաւրիզը, որի մերձակայ շրջաններում վաղուց հայեր չեն ապրում: Այլ վայրերի անունը վախեւում ենք չիշել:

Թեհրանում՝ մեր երկրի մայրաքաղաքում, այդ բանը կատարուում է առանձին հայաբնակ թաղերի հետ: Վաղուց է, որ «Մոլախում», «Շահպուրում», «Չալէ Մէջրանում», «Խորդինում», «Մանուրաբաղում», եւ այլ թաղերում ու գիւղերում հայեր չեն ապրում, այնինչ որոշ վայրերում դեռ կան հայկական կառույցներ ու կալուածները:

Հայկական նոր թաղերը եւս գերծ չեն մնում գրոհող տեղատուութեան առջեւ: Քաղաքի կենտրոնում գտնուող հայահոծ «Նազերի», «Լաւամ-օլ-Սալթանէ», «Ագիգիան», «Էսթախր», «Շէյխ Հադի», «Մանուշէհրի», «Հեղայեաթ», «Վիլա», «Աբան», եւ այլ թաղերն արդէն հատ ու կենտ հայ բնակիչներ ունեն, ինչի հետեւանքով թափուր են մնում այդ շրջանների հայկական կառույցների գգալի մասը:

«Մէջեղ Խանդան» թաղի «Շահ Աբաս» դպրոցն էլ արդէն իր վերանաւանած «Արամ» սրահով ասեկոսների առիթ է դարձել ...

Այս ամէնը բնական է մեր իրականութեան համար: Հայերը

քաղաքում տեղաշարժուում են եւ դրա հետեւանքով հիմնարկները եւ կառույցները մնում են «ձեռքից հեռու»: Մեր օրերի երթեւեկութեան բարդութիւնները աւելի են ծանրացնում վիճակը: Դեռ «Մաշիգիէ» կամ Չէյթուն թաղը մի նորմալ սրահ չունի, հակառակս սրահներ են լքուում ուրիշ քաղաքամասերում:

Դպրոցները այս շարքի ամենացատուն օղակն են կազմում:

Այս ամէնը նշանակում է, որ պրոբլեմներ, խնդիրներ, դժուարութիւններ կան: Դպրոցների, կառույցների, կալուածների վաճառքի հարցը, կամ օգտագործման նպատակի փոփոխութիւնը լիովին հասկանալի է:

Ինչո՞ւ է արևում այդ ամէնը: Այս հարցի պատասխանը շատ պարզ է եւ հասկանալի: Բայց եթէ հարցնենք՝ ինչպէս է արևում, կը հասնենք մեր համայնքային կեանքի ամենացաւոտ հարցադրումներից մէկին:

Համայնքային մարմիններն իրենց ուսումնասիրութիւններն են կատարում, պարզ ու յստակ, թէ կասկածելի ու երկչոտ որոշումներ անում, իսկ յետոյ անցնում դրանց կատարման դժուարին գործին:

Որոշումը յստակ է լինում, եթէ խնդիրը դրուում է պարզ եւ առանց հնարաւոր կնճիռների: Եթէ պէտք է վաճառել «Մարիամ» դպրոցը եւ տեղափոխել «Չէյթուն» քաղաքամաս, եթէ պէտք է վաճառել «Աւետիսեան» բուժարանը եւ տեղափոխել «Սասուն» քաղաքամաս, կատարուում է պարզ ու հասկանալի եւ շնորհակալ աշխատանք: Բայց ... Բայց ... Կան դէպքեր, որ հասկանալ

Շար.բ էջ 18



Singer Mohamad Salem

**Lebanese Special Mezza .....per person \$27**  
*Hummos, Imtabbal, Tabbouleh, Falafel, Spinach and Meat Pies, Raw Kubbeh, Salad, Kebbeh, Vegetarian Grape Leaves, Labneh, Feta Cheese, and Shawarma (Beef or Chicken). Your choice of Kebabs (Lamb, Bref, Chicken, and Kafta).*

**EVERY SATURDAY**  
**Live Arabic Music**  
**MOHAMAD SALEM**  
**& HIS BAND**



Sheik Wahib

**WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT**

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱՄԵՆԱԼԱՄԵԳ ԱՍՇԱՏԵՍԱԿՆԵՐ: ՈՒՆԻ ՆԵՐՔՐԻՆ ԵՒ ԲԱՅՕԴԵԱՅ ՆՍՏԵԼՈՒ ԲԱԺԻՆԵՐ

Բաց է Ծաբաթը 7 օր: Ունի յատուկ սրահ հաւաքոյթներու

**(626) 281-1006**  
**(626) 576-1048**  
**910 E. Main Str.**  
**ALHAMBRA, CA**

**WHOLE LAMB SPECIAL**  
**\$245.00 + Tax**  
*Whole Lamb Stuffed with Rice, Almonds, Pine Nuts and Pickles*

**WHOLE LAMB WITH MEZZA**  
**\$399.00 + Tax**

**LEBANESE SUSHI**

Raw Kubbeh .....	\$10.95
Habra Nayieh .....	\$10.95
Raw Liver .....	\$10.95
Kafta Nayieh .....	\$10.95

**Wahib's Middle East Restaurant**

**Daily Buffet**

**Lunch \$ 9.95**  
(12 noon-4:00 pm)

**Dinner \$ 14.95**  
(4:00 pm. - 9:00 pm.)

**CALL WAHIB FOR RESERVATIONS**

### ԲԱՍԲԱՍԱՆՔ ԹԵ՞ ԶԱԲԵՇՏ

#### ՍԱՄՈՒՔԷԼ ՅՈՎԱՍԱՓԵԱՆ

Լսե՛լ ես, Հայաստանի նախկին նախագահ պարոն Ռոբերտ Քոչարեանը եւ ներկայիս նախագահ պարոն Սերժ Սարգսեանը իրենց գաւակների հարսանիքների առթիւ տոնաներով վարդ են բերել տուել Հոլանտայից եւ շող են տուել Երեւանի վրայ:

Լսել եմ, լսում եմ, սակայն չեմ ուզում լսել, չեմ ուզում հաւատալ, չեմ կարողանում այդ լուրը ինչ որ տեղ դասաւորել, չեմ կարողանում այն իրական, բամբասանք, թէ որպէս գաւազտ ընդունել: Ու հաշուում եմ ու հաշուում, մէկ վարդը արժէ 2,5 եւրո, ուրեմն ի՞նչ, ասել է թէ հարիւր հազարներ:

Լսե՛լ ես, Հայաստանի մերօրեայ հաւատացեալ ու բարեսիրտ հարուստները, իրենց ապարանքներում եւ շատ սփիւռքահայ հաւատացեալներ վեհապառ Հայրապետի օրհնութեամբ ամենուր Աստծոյ տաճարներ են կառուցել ու կառուցելու են, որպէսզի այնտեղ, սովեալներին՝ հաց, հիւանդներին՝ առողջութիւն, աղքատներին՝ հարստութիւն խնդրեն եւ օր ու գիշեր աղօթեն նրանց եւ հայ ազգի հոգու փրկութեան եւ մեղքերի թողութեան համար:

Լսե՛լ ես, կան բնապաշտ ու զագանասէր հայեր, ովքեր իրենց սեփական կենդանաբանական այգիներն են կառուցում, վտանգուած առիւծներին, վագրերին ու էջերին սովեալ հայերից պաշտպանելու համար:

Այո, անշուշտ որ այդ բոլորը բամբասանք է, գաւազտ, որովհետեւ ես չեմ կարողանում այդ բոլորը հաւատալ, ինչ որ տեղ դասաւորել եւ ինձ հաստատելու համար մատներս ակամայ անգամներ սեղմում են համակարգիչի ամենակարող մուկիկի վրայ եւ փնտռում եմ աւելի ահաւոր բամբասանքներ հաստատող կայքէջեր՝ «Աղքատութիւնը Հայաստանում»: Ո՛վ քեզ խելացի մուկիկ, փնտռում եւ գտնում է 44.800 տեղեկագրութիւն, ամէն մէկը էջեր բացատրութիւններով՝ Աղքատութիւնը Հայաստանում:

Ֆորալբերգ, (Գերմանիա) կաթոլիկ եկեղեցու Քարիտաս բարեգործական կազմակերպութիւն:

«Հայաստանում մեծ է չքաւորութիւնը, աշխատանքը պակաս, Քարիտասը ծանրանում է այնտեղ, ուր ամենաշատ կարիք կայ:

Գիւմրի, Վարդակերտ գիւղի դպրոց, Փետրուար 2009 թուական, աշակերտները դասարաններում նստած են ձեռնոցներով, վերարկուներով եւ գլխարկներով, գրքերի եւ գրական պիտոյքի պակասութիւն կայ: Շատ դասարաններ ձմրանը չեն կարող տաքացուել, եթէ երեխաները իրենց հետ վառելիքայտ չբերեն, իսկ վառելիքայտը սակաւ ապրանք է, թէ տանը, թէ դպրոցում եւ այն էլ ձմրանը՝ մինուս 30 աստիճանի դէպքում: Դպրոցի սանիտարական կառուցները, մեղմ ասած, գտնուում են ողբերգական վիճակում, դասասենեակների պատերը բորբոսնած են, հոսող ջուր բոլորովին գոյութիւն չունի» - Word Vision՝ «Սոսկալի չքաւորութիւն Հայաստանում:

Հայաստանում տիրում է համընդհանուր աղքատութիւն, ամէնից առաջ գիւղացիութեան մօտ, հայութեան կէսից աւելին ապրում են օրական միայն 1,5 շուէցարական ֆրանկով: Բոլորից առաջ

երեխաներն են տառապում նման անբարենպաստ պայմաններում, քանի որ նրանք մեծանում են սոսկալի չքավորութեան մէջ եւ բոլորովին շանս չունեն իրենց ապագան բարելաւելու համար»:

Գերմանիայի կարմիր խաչ՝ «Երկրաշարժը, պատերազմը, շրջափակումը, տնտեսական անկումը եւ տիրող ճգնաժամը էլ աւելի են խորացրել աղքատութիւնը Հայաստանում, որը ամէնից առաջ հարուածում է որբ երեխաներին, ծերերին, հաշմանդամներին, միայնակ մնացած մայրերին, ինչպէս նաեւ խրոնիկ հիւանդներին եւ փախստականներին: Շատ ընտանիքներ կարողանում են միայն հացով սնուել: Այս խմբերի համար կարմիր խաչը 1994-ից ի վեր հիմնել է «գթասրտութեան խոհանոցը»: Առաջին 14 տարիներին Հայաստանի մայրաքաղաքում կաթոլիկներին բաժանուել են աւելի քան 1,1 միլիոն բաժին ճաշ» էջեր, էջեր, հազարաւոր եւ հազարաւոր էջեր, յուսահատութեան, աղքատութեան, չքաւորութեան մէջ

Շաբ.ք էջ 17

### ՄԵՐ ԷԼԻՏԱՅԻ ԲԱՐԴՈՅԹ

#### ՅԱԿՈՐԲԱՂԱԼԵԱՆ

Օտարալեզու դպրոցների խնդրին անդրադարձաւ նաեւ Սերժ Սարգսեանը: Նրա մամուլի քարտուղար Արմէն Արզումանեանը «Առաւօտ» օրաթերթի հարցին պատասխանելով, ասել է, որ Սերժ Սարգսեանը դրական է վերաբերում այդ դպրոցների բացմանը: Այդ վերաբերմունքի մէջ հետաքրքրական բացատրութիւնն է, որով հիմնաւորում է, թէ ինչու է Սերժ Սարգսեանը կողմ այդ դպրոցների ստեղծմանը:

«Քննարկում է ոչ թէ օտարալեզու, այլ միջազգային չափանիշներին համապատասխան մի քանի մասնաւոր դպրոց Հայաստանում հիմնելու խնդիրը, եւ Հայաստանի Հանրապետութեան նախագահը դրան դրական է վերաբերում:

Սա հնարաւորութիւն կը տայ օժտուած շատ երեխաների ոչ թէ բռնել օտարութեան ճանապարհը, այլ Հայաստանում լիարժէք կրթութիւն ստանալ: Ընդ որում, այդ դպրոցներում հայագիտական առարկաների ուսումնասիրութիւնը

պարտադիր է լինելու: Այդպիսի դպրոցների շնորհիւ սփիւռքահայ երեխաները կարող են Հայաստանում կրթութիւն ստանալ, աւելի սերտ կապեր հաստատել հայրենիքի հետ», ասել է նախագահի մամուլի քարտուղար Արմէն Արզումանեանը:

Այդ բացատրութեան մէջ կան մի քանի մտքեր, որոնք առաջացնում են որոշակի հարցեր: Օրինակ, ինչ է նշանակում ոչ թէ օտարալեզու, այլ միջազգային չափանիշներին համապատասխան մասնաւոր դպրոցներ: Այդ դէպքում ինչու է փոխուում Լեզուի մասին օրէնքը, եթէ խօսքը օտարալեզու դպրոցի մասին չէ: Այսինքն, ակնյայտ է, որ փորձ է արւում հասկացութիւնների խաղարկմամբ որոշակիօրէն սքողել բուն խնդիրը: Ի՞նչ է նշանակում մասնաւոր դպրոց:

Ի՞նչ ծրագրով են այդ դպրոցները կրթութիւն տալու երեխաներին, ի՞նչ լեզուով է լինելու այդ կրթութիւնը: Ի՞նչ է նշանակում հայագիտական առարկաների պարտադիր ուսուցում: Իսկ ի՞նչը չի

Շաբ.ք էջ 19



ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ԽՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ  
**ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԱԽՈՒՄԲ**  
 Անկախութեամբ՝ Հայրենի արուեստագէտ պարուսոյց  
**ՏԻԿԻՆ ԱՐԵՒԻԿ ՅԱԿՈՒԲԵԱՆԻ**  
 NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION  
**ARMENIAN DANCE ENSEMBLE**  
 Dance instructor and artist: **MRS. AREVIK HAKOPYAN**

FOR ALL AGES 5 & UP  
 5 ՏԱՐԵԿԱԼԷՆ ՍԿՍԵԱԼ

**626.398.0506**

**626.710.0317**

**REGISTRATION STARTS JUNE 4TH**

Tuesdays	5:00 - 6:00pm
Thursdays	5:00 - 6:00pm
Fridays	7:00 - 8:00pm

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԻՍ 4-ԷՆ ՍԿՍԵԱԼ  
 Երեքշաբթի օրերը ժամը 5:00-6:00  
 Հինգշաբթի օրերը ժամը 5:00-6:00  
 Ուրբաթ օրերը ժամը 7:00-8:00



**CLASSES BEGIN JUNE 14**  
**MONDAYS and THURSDAYS • 5:00-6:00**  
 Պարի փորձերը ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԵՒ ՀԻՆԳՇԱԲԹԻ  
 ՅՈՒՆԻՍ 14-ԷՆ ՍԿՍԵԱԼ երեկոյեան ժամը 5:00-6:00  
 Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ  
 1060 NORTH ALLEN AVENUE, PASADENA, CA 91104



### ՊԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 55ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ



Այս տարի կը գուգադիպի Պէյրուսի Հայկազեան Համալսարանի հիմնադրութեան 55րդ տարեդարձին: Արդէն իսկ մի քանի ձեռնարկներ ծրագրուած են տօնախմբելու այս բարեբաստիկ աւիթը Պէյրուսի մէջ: Իսկ առաջին անգամ ըլլալով Ամերիկայի մէջ ալ պիտի նշուի այս տարեդարձը Կալա-ձաշկերոյթով մը, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ Նոյեմբեր 12-ին՝ կազմակերպութեամբ Տիկնանց Օժանդակ Մարմնին, Շրջանաւարտից Միութեան եւ Հայկազեան Համալսարանի Բարեկամներու Խմբակին:

Սոյն ձեռնարկը տեղի պիտի ունենայ Կլենտէյլի Հիլթըն պանդոկին մէջ եւ օրուայ պատգամը տալու հրահրուած է Համալսարանի նախկին դասախօսներէն Դոկտ. Մանուկ Մանուկեանը: Ան էր որ ժամանակին հիմնեց Համալսարանի նշանաւոր Հոթելիային Ընկերակցութիւնը եւ վերջերս պատրաստ «Յեղասպանութեան Ազդակը» հեռատեսային ծրագիրը՝ որ հաղորդուեցաւ Միացեալ Նահանգներու տարածքին, ամերիկեան PBS յայտագրէն:

Յիշատակութեան արժանի է լիշել նաեւ որ այդ ձեռնարկին ներկայ պիտի գտնուի Համալսարանի հիմնադիր նախագահ Դոկտ. Ճան Մարգրեանը:

«Մենք իսկապէս օրհնուած ենք որ ականատեսները դարձած ենք Հայկազեան Համալսարանի յառատեւ բարեկամներ: Որպէս բարձ-

րագոյն ուսման լաւագոյն հաստատութիւններէն մին Լիբանանի մէջ, սկսանք աւելցնել ուսման նոր ծրագիրներ եւ դասարաններ՝ գոհացում տալու նորագիր աշակերտներու կարիքներուն:» Ըսած է Պատուելի Դոկտ. Փօլ Հայտոսթեան, Նախագահը՝ Հայկազեան Համալսարանի: Ան սրտագին կոչ կ'ուղղէ նաեւ աշխարհաճրիւ շրջանաւարտներուն որ կապ պահեն իրենց ուսումնարանին հետ եւ մասնակցին անոր տօնակատարութեանց՝ Լիբանանի մէջ թէ Լոս Անճելըսի:

Լոս Անճելըսի մէջ կայանալիք յառաջիկայ Կալա-ձաշկերոյթին նախապատրաստական աշխատանքները տեղադրին կը շարունակուին՝ այս առթիւ կազմակերպուած յատուկ յանձնարումներ մը կողմէ: Անոնց նպատակն է ապահովել ներկայութիւնը մեծ թիւով շրջանաւարտներու, սիւսուած Ամերիկայի տարածքին: Յիշատակութեան արժանի է նշել որ այս ձաշկերոյթին ներկայ պիտի գտնուին համալսարանի ներկայ եւ անցեալի նախագահները, ինչպէս նաեւ Խնամակալ Մարմնի անդամները:

Կալա-ձաշկերոյթի ընթացքին խօսք պիտի առնեն պատուարժան հիւրեր եւ պիտի գործադրուի գեղարուեստական պատշաճ յայտագիր: Բոլոր անոնք որոնք կը ծրագրեն մասնակցիլ, թող բարի ըլլան մեզի հետ կապ պահելով՝ հետեւեալ հասցէով՝ [alumni@haigazian.edu.lb](mailto:alumni@haigazian.edu.lb) (Tel: 818-281-0351).

### ՔԱՄԲԱՍՆՔ ԹԵ՞ ԶԱԲԵՇՏ

Շարունակուած էջ 16-էն

տառապող ճակատագրերի մասին, հայ ժողովրդի անկումի մասին: Վառող, այրող էջեր: Ո՛չ, ո՛չ, իհարկէ որ դրանք բամբասանքներ են, իհարկէ որ դրանք չար կատակներ են, իհարկէ որ դրանք սոսկալի մղձաւանջ են եւ ես արթնանալ չեմ կարողանում:

Բայց ճշ, ես արթնանում եմ խորը քնից նկատում, որ այդ ամէնը մղձաւանջ է, այլ մերօրեայ իրականութիւն եւ Նարեկացու նման նախ պահարկում, դատափետում եմ ինքս ինձ, իմ անձը, որ այսքան տարի լուել եմ, ինձ չտեսնելու եմ տուել, հարմարուել: Օ՛հ, ամէնից առաջ անէ՞ք ու ամօթ ինձ, որ հայ եմ, որ ինձ հայ եմ կոչում եւ այդ ամէնը տեսնում, լսում ու հան-

դուրժում եմ: Ամօթ համայն հայութեանը, իհարկէ ամէնից առաջ պատասխանատուներին, որ այսօր էլ ինչպէս անցյալում, երոպացիների մօտ հայութիւնը հոմանիշ է՝ խեղճութեան, աղքատութեան, ստրկութեան, որ այսօր էլ օտար բարեգործական ընկերութիւններ աշխարհով մէկ նպաստներ են խնդրում՝ Հայաստանի սովեակներին, աղքատներին, որբերին, հիւանդներին եւ փախստականներին օգնելու համար:

Կ'արթնանայ՞ հայ ժողովուրդը, կը գտնի՞ ելք, թէ՞ պէտք է յաւիտեանս նոյն՝ խեղճի, աղքատի, պարտուածի, անօգնականի պիտակը իր անուան վրայ կրի եւ աչքը մնայ օտարներին:

Բեռլին, Յունիս 2010

### ՀԱՐԿԵՐԸ ԵՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 6-էն

կին եւ այդ անցքերին դէմ տուեցին իրենց անձնական դաշտերը: Վերջին մէկուկէս տարուայ ընթացքում կառավարութիւնը հակայական վարկեր վերցրեց՝ մէկուկէս միլիարդ դոլարից աւելի, սակայն որեւէ արդիւնք չենք տեսնում՝ գումարները կաթսայի յատակի անցքերով արագօրէն դուրս հոսեցին: Տնտեսական չնչին աշխուժացումը կառավարութեան քաղաքականութեան արդիւնք է, այլ պայմանաւորուած է դրամափոխանցումների աճով:

Ֆէոդալիզմից կապիտալիզմ անցումը իրատ ցաւագին է եղել Եւրոպայում, ուղեկցուել է քաղաքական եւ սոցիալական սուր ցնցումներով: Ֆէոդալական պետութիւնում ընդդիմութիւն չի կարող լինել, միայն պալատական յեղաշրջումներ, օրինակ՝ ինչպէս 2008-ին, երբ վերնախաւի մի խմբին փոխարինում է միւսը: Բուրժուական կարգերին անցնելու համար հարկաւոր է յեղափոխութիւն, կարելու է՝ խաղաղ եւ կոմպրոմիսային, թէ՛ ոչ: Յեղափոխութեան էությունը նոր էլիտայի՝ բուրժուական վերնախաւի յայտնուելն է, որը գալիս է փոխարինելու կառավարող հին՝ ֆէոդալական էլիտային: Իսկ այդ նոր դասակարգի՝

բուրժուական վերնախաւի ուժը նրա տուած հարկերն էին, այլապէս նա չէր յաղթի:

Ֆրանսիայում յեղափոխութիւնից առաջ արքունիքը գուրջանքեր էր գործադրում վերակառուցել հարկային համակարգը, որպէսզի կարողանայ փակել հակայական բիւջետային դեֆիցիտը: Բարեփոխումներին հիմնականում ընդդիմանում էր արիստոկրատիան, որը չէր ցանկանում վճարել հողային հարկ, չղուելով իր դարաւոր արտօնութիւններին: Միւսըն յեղափոխութիւնից առաջ հումորով նկատել է, որ պետական պարտքը ֆրանսիական ազգի անգին գանձն է, նկատի ունենալով, որ այն յեղափոխականացում է գանգուածներին: Համանման էր իրավիճակը Արգենտինայում, որը 2002 թ հանգեցրեց ժողովրդական յեղափոխութեան:

Պատմութիւնը ցոյց է տալիս, որ հարկեր չվճարելը, «ընտրեալներին» հարկային արտօնութիւններ շնորհելը յարուցում են ամենամեծ հասարակական վրդովմունք եւ յեղափոխութիւնների հիմնական պատճառն են: Միւսըն չի հետեւութեամբ կարող ենք ասել, որ փոքր բիւջէն, արտաքին մեծ պարտքը ապագայ հայկական բուրժուական յեղափոխութեան գլխաւոր նախադրեալն են:

### ՔԱՆՆԵՐՈՒ 95-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ

Շարունակուած էջ 7-էն

թեան, հաւատքը հաւաքական ուժին, հաւատքը՝ հայրենիքի անփոխարինելիութեան, հիմնական մասերն են Հնչակեան դաւանանքին:

«Լիբանանահայութեան առջեւ այսօր եւս ցցուած են շատ աւելի լուրջ հիմնախնդիրներ՝ քան խորհրդարանական, քաղաքապետական կամ թաղապետական ընտրութիւնները: Մերձաւոր Արեւելքի մէջ թուրքիոյ տրուող նոր դերակատարութիւնը եւ անոր կատարած աշխոյժ թափանցումները, գորս նէօ-օսմանականութիւնը կը կոչեն, մեզ կը դնեն լուրջ մտահոգութիւններու դիմաց: Եւ ինչպէս որ Քասնները իր օրին սկզբունքայնօրէն դէմ էին օսմանականութեան զաղափարին, անոնց ժառանգորդներն ու հետեւորդները՝ այսօր դէմ են այն ամէն ինչին որ կը լիշեցնէ ու կապ մը ունի օսմանականութեան հետ: Նէօ-օսմանիզմը նոյն վտանգաւոր գաղափարախօսութեան արդիականացած, նորոգուած տարազն է՝ արդիականացած ու վերանորոգուած ձեւերով: Համայնքային կառուցում կաղապարուած այս երկրին մէջ, լիբանանահայ համայնքին հեղինակութիւնը՝ իսկապէս սկսած է դառնալ ինդրոյ առարկայ:

«Մենք կը հաւատանք, որ լիբանանահայութիւնը ունի հաւաքական ուժ դառնալու կարելիութիւն՝ միասնաբար դիմագրաւելու համար գաղութին սպառնացող որեւէ վտանգ»:

Ընկերը իր խօսքը աւարտեց հետեւեալ գաղափարով.-

«Փառք է ու պատիւ Քասններու կուսակցութեան գինուորը ըլլալ, անոնց յանդուգն կեցուածքներուն ու քաղաքական հեռատեսութեան հետեւորդը ըլլալ:

«Հարիւրապատիկ փառք է ու պատիւ՝ մեզի սպասող պայքարի դաշտերուն վրայ բարձր պահել սուրբ դրօշը, Քասններու կուսակցութեան դրօշը»:

Ապա, ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան խօսքը փոխանցեց ընկեր Յակոբ Տիգրանեան: (Յակոբ Տիգրանեանի ելույթը կարդալ էջ 2-ի վրայ)

Ապա գործադրուեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր մը: Երիտասարդ արուեստագէտ Արթիւր Քէշիշեան եւ իր նուագախումբը մատուցեցին բոլոր մը ազգային երգեր: Ապա, ազգային հայրենասիրական երգերով ելույթ ունեցաւ գաղութի սիրուած երգիչ Կարօ Կապուտակեան: Այնուհետեւ գաղութի սիրուած արուեստագիտուհի Անի Սարաֆեան-Եփրեմեան ապրումով սամուկեքեց ժառգ Յակոբեանի բոցաշունչ ստեղծագործութիւններէն «Յաղթերգութիւն»ը, որմէ ետք բեմ բարձրացան կուսակցական եւ ազգային երգերու մեկնաբան Պերճ Նազգաշեան եւ իր նուագախումբը, որոնք գաղաթնակէտին հասցուցին հանդիսութեան ոգեշունչ միջնորդութիւն:

Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ հրավառութիւն:

**ՔԱՉ ՆԱԶԱՐ**  
**ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
 Ամէն Կիրակի երեկոյեան  
 Ժամը 10:00-ից 12:30  
 Կլէմտէյի 380-րդ կայանից



### ՄԱՇԱԶԴ

Խոր ցաւով կը գուժենք մեր մօր, մեծ մօր, քրոջ եւ ազգականին



ԼՈՒՍԻՆ ԽՈՏԱՆԵԱՆԻ

Մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, Յունիս 23-ին յետ երկարատեւ հիւանդութեան:

Սգակիրներն են Ջաւահիրներ՝ Տէր եւ Տիկին Յովհաննէս(ժան) եւ Սիրվանա Խոտանեան եւ զաւակունք

Տէր եւ Տիկին Պետրոս եւ Լենա Խոտանեան եւ զաւակունք Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Քաթիա Խոտանեան եւ զաւակունք Տէր եւ Տիկին Վազգէն եւ Սեդա Խոտանեան եւ զաւակը Քոյրերը՝

Այրի Տիկ. Ազնիւ Տէր-Ղուկասեան եւ զաւակունք Տէր եւ Տիկին Սարգիս եւ Օփն Ջուլիան եւ զաւակունք Նան՝

Տատեան, Կարապետեան, Քիւրէյեան, Քրմոյեան եւ Գուգուեան ընտանիքները:

Յուղարկաւորութիւնը տեղի կ'ունենայ Երեքշաբթի, Յունիս 29-ի առաւօտեան ժամը 9:30-ին Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան Church Of The Hills եկեղեցւոյ մէջ (ձերմակ եկեղեցի):

Թաղումը տեղի կ'ունենայ նոյն գերեզմանատան մէջ:

Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կատարել «Նոր Ամբուլ» Մշակութային Միութեան:

### ՇՈՒԿԵՆԱԿԻՍ

#### ՅԱԿՈՒ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

մահուան քառասունքին առիթով, Կիրակի, 27 Յունիս 2010, յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ Հոգեհանգստեան պաշտօն վէճն Նայի Ս. Պետրոս եկեղեցւոյ մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, CA 91406:

Հանգուցեալի չիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

### ՅԱԿՈՒ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Հանգուցեալ ԿԱՐՕ ԿԱՐՎԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Արմէն եւ Ռիթա Պարանեան իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի հարազատներուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 կը նուիրեն «Մասիս»ի ֆոնտին:

### ՅԱԿՈՒ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Հանգուցեալ ԿԱՐՕ ԿԱՐՎԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Կիւրեղ եւ Շողիկ Մանկրեան իրենց խորազգաց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի հարազատներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ասատուր եւ Սօսի Նորիկեաններուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 կը նուիրեն «Մասիս»ի ֆոնտին:

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
1060 North Allen Avenue  
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506

### ԱՐԱՐԱՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԵԱԼ ԴՊՐՈՑՑ

Շարունակուած էջ 8-էն

Արդարեւ, Արարատ Պայմանագրեալ դպրոցը հանրային դպրոց ըլլալուն, գուրկ է կրթաթոշակէ եւ ստիպուած է ընդունելու ունէ դիմող աշակերտ պայմանաւ որ տեղ ունենայ:

Եթէ աշակերտներու արձանագրութիւնները գերազանցեն դպրոցի շէնքին հնարաւորութեան, աշակերտները պիտի ընտրուին հանրային վիճակահանութեամբ: Արարատ Պայմանագրեալ Դպրոցի առաքելութիւնը կը կայանայ աշակերտներու թաքուն կարողութիւնները լաւագոյնս զարգացնելու, շրջապատի մը մէջ՝ ուր կը քաջալերուի ակադեմիական սքանչելիութիւնը, կ'արժեւորէ մշակութային եւ լեզուական այլազանութիւնն ու ստեղծագործական արտայայտութիւնը: Արարատ Պայմանագրեալ դպրոցի բոլոր ծրագիրներու առաջնահերթ նպատակակէտը կը կայանայ ամբողջական աշակերտը զարգացնելու եւ աճեցնելու մէջ:

Արարատ Պայմանագրեալ դպրոցը արտակարգ եւ բացառիկ դպրոց մը պիտի ըլլայ որովհետեւ հետեւեալը պիտի հայթայթէ.

. Ապահով եւ անվտանգ միջավայր

. Շատ մը պետական դպրոցներէ աւելի փոքր դպրոց

. Անհատականացուած ուսումնական ծրագիր եւ փոքր թիւով աշակերտներ դասարաններուն մէջ:

. Դպրոցական երկար օր եւ տարի

. Որակաւոր յաւելուած ծրագիրներ դպրոցէ ետք

. Անհատապէս սորվեցնելու ծրագիրներ

. Զօրաւոր ակադեմիական դասընթացներ լեզուի, ուսողութեան,

գիտութեան, եւ ընկերային գիտութիւններու մէջ

. Բարձրորակ վկայեալ ուսուցիչներ

. Տեսողական եւ կատարողական արուեստներ

. Տեղեկութեան գիտարուեստ (technology)

. Առիթը հայերէն եւ սպաներէն լեզուները սորվելու

. Տարբեր մշակոյթներու գնահատում

. Լաւ սովորութիւններ՝ անհատի ֆիզիքական կարողութեան եւ առողջութեան մէջ:

. Նկարագրի ուսուցում:

Այս բացառիկ եւ արդիական դպրոցը յաճախելը այժմ հնարաւոր է: Արարատ Պայմանագրեալ Դպրոցի աշակերտութիւնը առանձնաշնորհումը պիտի ունենայ ստանալու բարձր մակարդակի յաւելեալ ծրագիրներ, մթնոլորտի մը մէջ՝ որ ոչ միայն ապահով եւ անվտանգ է այլ նաեւ հնարաւորութիւնը ունի հայթայթելու բարձրագոյն որակաւոր ուսում:

Ծնողներ որոնք հետաքրքրուած են իրենց զաւակները արձանագրել Արարատ Պայմանագրեալ դպրոցը, հաճին դիմել վարչական կազմի քարտուղար՝ Այտաթաթէոսեանին: Հեռաձայն՝ (818) 321-2462, ե. նամակ atatiou@lausd.net: Իսկապէս երախտապար ենք Արարատ Պայմանագրեալ Միութեան հոգաբարձութեան, Լոս Անճելոսի շրջանային միացեալ դպրոցներու (LAUSD) տնօրէնութեան եւ համայն գաղութի անաչառ նեցուկը ստացած ըլլալնու համար. նաեւ կը փափաքինք ձեզ մասնակից դարձնել Արարատ Պայմանագրեալ դպրոցի յառաջիկայ շարունակական յաջողութիւններուն:

### ՄԵՐ ԷԼԻՏԱՅԻ ԲԱՐՈՅԹ

Շարունակուած էջ 16-էն

լինելու պարտադիր:

Ի՞նչ է նշանակում օտարութեան ճամբան բռնող օժտուած երեխաներ: Քանի՞ն են նրանք, կա՞յ արդեօք վիճակագրութիւն: Ի՞նչ սոցիալական խաւից են նրանք: Կարո՞ղ է արդեօք Հայաստանի միջին վիճակագրական քաղաքացու օժտուած երեխան կրթութեան համար բռնել օտարութեան ճամբան: Հազիւ թէ: Միջին վիճակագրական քաղաքացու երեխան Հայաստանում հայալեզու դպրոցի ճանապարհն է հազիւ «բռնում», ուր մնաց օտարութեան ճամբան բռնի: Ուրեմն խօսքն ունենուր խաւի երեխաների մասին է: Այլ կերպ ասած, խօսքը էլիտար դպրոցներ բացելու մասին է:

Ակնյայտօրէն ուրուագծուած է իշխանութեան նախաձեռնութեան հոգեբանական ենթատեքստը: Էլիտար բնակարանները կառուցեցին, հիմա պէտք է կառուցուեն էլիտար դպրոցները, որպէսզի էլիտար բնակարաններում ապրողների երեխաները դպրոցներում յանկարծ չփուժուեն հասարակ քաղաքացիների երեխաների հետ: Յետոյ կը կառուցուեն էլիտար բուհեր, յետոյ էլիտար փողոցներ, էլիտար մայրթեր, էլիտար օդանավակայաններ: Իշխող «էլիտայի» համար տհաճ է որեւէ շփում ունենալ հասարակ քաղաքացիների հետ, այդ իսկ պատճառով «էլիտան» կառուցում է իր աշխարհը: Իսկ հասարակ քաղաքացիների դպրոցները ինչ

ուզում են թող լինեն, հասարակ քաղաքացիները կանգառներում թող նուազեն տրանսպորտ սպասելիս, փողոցներում թող խեղդուեն շոգից կամ գոլ քամու առաջացրած փոշուց եւ կեղտից, հասարակ քաղաքացիների սներն ու շէնքերը թող քանդուեն, քաղաքացիները թող ընկնեն իրենց վերելակների խորշերը, թող վայելեն կեանքը գետնախորշում:

Դա է ամբողջ ինդիքը: Որեւէ պարագայում որեւէ ինդիքի լուծման հարց դնելիս, շատ կարեւոր է հարցադրուումն անողի հոգեբանութիւնը: Այլ է հոչակուող նպատակը, եւ այլ են իրական, ենթագիտակցական մղումները: Ու որոշումները

փաստարկման ու հիմնաւորման համոզականութիւնը պայմանաւորուած է հենց հոգեբանական, ենթագիտակցական վիճակով: Թերեւս դա է պատճառը, որ իշխանութիւնը ոչ մի կերպ չի կարողանում հիմնաւորել, որ իր նախաձեռնութիւնը բխում է կրթական համակարգը բարելաւելու անկեղծ մղումից, որ այդ մղումը միտուած է շարքային քաղաքացու շահին եւ ոչ թէ սպասարկում է ընդամէնը մի փոքր խմբի պիզնես շահը եւ յագուրդ տալիս «էլիտայի» բարդոյթներին:

Չի ստացուած փաստարկել, հիմնաւորել, բացատրել, որովհետեւ չկայ հոգեբանական եւ ենթագիտակցական անկեղծութիւնը:

«ԼՐԱԳԻՐ»

### ՓՈՒԹՊՈՒԼԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ԱԲԱՐՏԱՆԱԴԵՐՈՒ 1/16 ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ

Յունիս 26 Շաբաթ  
 Ժամը 7:00  
 Ուրուկուէյ-Հարաւայից Քորէա  
 Ժամը 11:30  
 Միացեալ Նահանգներ-Դանիա  
 Յունիս 27 Կիրակի  
 Ժամը 7:00  
 Գերմանիա-Անգլիա  
 Ժամը 11:30  
 Արժանթին-Սեքսիքա  
 Յունիս 28 Երկուշաբթի  
 Ժամը 7:00  
 Հոլանտա-Սլովակիա  
 Ժամը 11:30  
 Առաջին Ե խմբակ-Երկրորդ Ը խմբակ  
 Յունիս 29 Երեքշաբթի  
 Ժամը 7:00  
 Փարակուէյ-Ճափոն  
 Ժամը 11:30  
 Երկրորդ Ե խմբակ-Առաջին Ը խմբակ



### ՌՈՒԲԷՆ ԱԼԵՔՍԱՆԵԱՆԸ ՆՈՒԱՃԵՑ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԻՏՐԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՈՍԿԻՆ



Պուլկարիայի մայրաքաղաքում աւարտուած ծանրամարտի աշխարհի առաջնութեան վերջին օրը մրցահարթակ դուրս եկան գերծանր քաշայինները՝ +105 քաշային կարգում հանդէս եկող մարզիկները: Մրցակցութիւնից դուրս էր Հայաստանի հաւաքականի 20-ամեայ ներկայացուցիչ Ռուբէն Ալեքսանեանը: Մեծահասակների Եւրոպայի փոխախոյններ Սոֆիայում մերձակայ հետապնդողին գերազանցեց 12 կգ: Երկրորդ տեղը զբաղեցրած ռուսաստանցի Զաուրբեկ Նանի-ը պոկում վարժութիւնում ցոյց տուեց 172 կգ արդիւնք, իսկ Ռ. Ալեքսանեանը պատուիրեց 180 կգ եւ այդ քաշը բարձրացրեց միայն երկրորդ փորձից: 190 կգ-ոց ծանրաձողը պոկում վարժութիւնում բարձրացնել մեր մարզիկին չյաջողուեց: Իսկ հրում վարժութիւնում Ռ. Ալեքսանեանը յաղթեց հենց առաջին փորձից: Բարձրացնելով 212 կգ՝ Ռ. Ալեքսանեանի հիմնական մրցակիցը Զ. Նանի-ը իր ելույթն աւարտեց 208 կգ արդիւնքով: Երկամարտում Ռ. Ալեքսանեանը հաւաքեց 392 կգ:

### ՋԵՐՍՈՒԿՈՒՄ ՍԵԿՆԱՐԿԵԼ Է ՖԻԴԵ-Ի ԿԱՆԱՏՑ «ԳՐԱՆ ՊՐԻ» 4-ՐԴ ՄՐՑԱՇԱՐԸ

Յունիսի 24-ին Ջերմուկում մեկնարկում են ՖԻԴԵ-ի կանանց «Գրան պրի» 4-րդ մրցաշարի հանդիպումները: Մրցաշարը նուիրուած է շախմատային էտյուդի արքայ Հենրիկ Գասպարեանի 100-ամեակին: Մրցաշարին մասնակցում են 7 երկրների 12 գրոսմայստերներ, այդ թւում աշխարհի 3 չեմպիոնուհիներ՝ Մայա Չիբուրդանիձեն (Վրաստան), Անտուանետա Ստեֆանովան (Բուլղարիա), եւ Յան Սենը (Չինաստան): Հայաստանը ներկայացնում են էլինա Դանիելեանը եւ Լիլիթ Մկրտչեանը: Նշենք, որ Ջերմուկում երկրորդ անգամն է անցկացւում ՖԻԴԵ-ի «Գրան պրի» մրցաշարը:



### ՎԻԿ ԴԱՐՉԻՆԵԱՆԸ ՀԵՐԹԱԿԱՆ ՄՐՑԱՄԱՐՏԸ ԿԱՆՑԿԱՑՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ

Բռնցքամարտի աշխարհի յոթակի չեմպիոն Վիկ Դարչինեանը, հաւանաբար, Սեպտեմբերին Լոս Անջելեսում կամ Լաս Վեգասում կը մենամարտի Ֆերնանդո Մոնթիելի հետ: 34-ամեայ մարզիկը մտադիր է հնարավորինս շատ չեմպիոնական գօտիներ նուաճել, ապա ԱՄՆ-ում իր ճանաչման շնորհիւ նպաստել հայ երիտասարդ սերնդի բռնցքամարտիկների աճին, մրցամարտերի անցկացմանը, պայմանով, որ նրանք կգնան մրցամարտերի եւ կը վերադառնան Հայաստան:

# World Cup 2010 Viewing Party

All matches start at 11:30am  
Doors will open at 11am

Admission is Free  
Food will be sold

June 12 England vs USA	June 27 Round of 16
June 20 Brazil vs Ivory Coast	July 3 Quarterfinal
June 26 Round of 16	July 10 Third Place Match

## JULY 11 WORLD CUP FINAL!

Pasadena Homenmen Center  
1060 N. Allen Avenue  
Pasadena, CA 91104

For info visit  
[www.homenmen.org](http://www.homenmen.org)  
or call 1-818-660-5HMM